2307
1.X1.5

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ յօդուածները կրճատում է, նկատելով փոխադրութեան և չափ տալիք (տող թերթից պակաս) չէ վերադարձնում։ **Ա. Ճնճղեան**ի *տեսակցութիւն խմբագրի հետ երեքշաբթի եւ ուրբաթ առաւ. ժ. 11—12։*

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԹԻՖԼԻՍ, Մադատեան փ. տ. № 5, բաց է ամեն օր (բացի կիրակի և տօն օրերից) առ. 10 ժ. մինչև 2-ը կէսօրից յետոյ։ Հասցէն՝ Тифлисъ, редакція ТАРАЗЪ-ГЕГАПНДЖИКЪ, Caucase, Tiflis. Rédaction de la Revue TARAZ-GEGHAFNDJIK. Տելեֆօն № 282.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ, ընդունւում է ամեն լեզուով Գեղամինջիկի երեսի մի քառորդոր պատր տասնչին երես 40 կոպ. վերջին երես 25 կոպ. մանրատառ (պրեխա)։ Արտասահմանից կրկնակի։ Շատ անգամ կրկնուող յայտարարութիւններին առանձին համաձայնութեամբ։

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ 1907 թ. № 1 *ՏԱՍՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ*

ՅՈՒՆՒԱՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

պատկերներ եւ նկարներ

1. *Բաղդի լուծքը, նկար Ալֆ. Շտարցի։*
2. *ԱՐՈԶԱ Fantasie բրակտոտ թիւնից*
3. *I գործող. Շուշան տեսարաններ*
4. *(4 կէրչ)։*
5.

Սովաման գաւառներ

6. *Շուշի քաղաքը (Ալբոմ)։*
7. *Թօրքա (Միանիք)։*
8. *Զանգեզուրի լեռներն ու պղնձահանքերը։*

Ժամանակակից մատենագիրներ

9. *Նար-Դոս։*
10. *Աստուածային Մանուկն ու Աստուածամայրը։*
11. *Ռօբերտ Շուժան (ժամանի յիշատակ)։*

Թատր շիրիմներ

12. *Նահապետ եպիսկոպոս Նահապետեան*
13. *Աբիսաակէս արքեպիսկոպ. Սեդրակեան։*
14. *Մկրտիչ Պալեան։*
15. *Գէորգ Պետրոսեան։*
16. *Պետրոս Օտօչինին։*
17. *Գ. Պետրոսեան (գրիմով. գերեզմէջ)։*
18. *Մուզաֆֆեր-Էդդին շահ։*

19. *Սեաննայ հինաւուրց վանքը։*

Ջ ա ւ ե շ տ

20. *Քաղաքական կօնգրես—Տրիւօ։*

Ն Ի Ւ Թ

1. *Ազգեան Գ.*
2. *Բարխուդարեան Գ.*
3. *Բաշինջաղեան Գ.*
4. *Մարկոսեան Լ.*
5. *Յարութիւնեան Ի.*
6. *Նար-Դոս։*
7. *Նազարեան Տ.*
8. *Զաքեան Գ.*
9. *Պետրոսեան Յ.*
10. *Սիլեան*
11. *Վանցեան Գ.*
12. Tigo
13. *Բաղատէս*

ԲԱՅԻԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

XXV ԱՂԲԻՒՐ 1907 ԳԵՂԱՓՆՋԻԿ 1

ՀԱՆԴԷՍՆԵՐԻ

Աշխատակցում են հայ գրական ընտիր ոյժերը, կլիշէները պատրաստւում են բացառապէս արտասահմանի առաջնակարգ գործարաններում։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ՝ Աղբիւր 3 ր. (արտասահման 5 ր.) Տարազ-Գեղափնջիկ 3 ր. արտասահման 5 ր. Աղբիւր և Տարազ-Գեղափնջիկ յօթեղեանական Ալբոմ-Արմանախով տարին 5 ր. (Արտասահման 10 ր.) ամիսը 25 կ.։

Գրական գեղարուեստական ամսօրեայ

և

Մասսայի Բիւրօ

Հանդիսասրահների, գեղադէմների, գրագէմների, լուսագրմների

(Աղբիւր-Տարազի խմբագրատան կից)

Առաջարկ, Հրատէր եւ Ընդունելութիւն գրական-գեղարուեստական աշխատասէրների։

ԳՐԱՄԵՆԵԱԿ,

ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

ԵՒ ԺՈՂՈՎՈՏԵՂԻ

Տեղեկատու։ Թարգմանութիւններ ամեն լեզուով։ Տարագրական գործի հետ առընչութիւն ունեցող ամեն տեսակ պատուէրների ընդունելութիւն։ Ընդարձակ յարաբերութիւն եւրոպական մեծաւոր հետ և մասնակարարում ի մըլիմակցութիւններին, տեղագրութիւններին, ծանուցումներին։ Արտագրութիւն ձեռագիրների վրայ ամեն լեզուով։ Յանձնարարութիւններ։ Գաղտնագիրներ՝— գրական եւ դեղագիտական առարկաների և արհեստների։ ՍՊԱՍՏԱՐԱՆ ու ՀՈՎՆԱՒՈՐՈՒԹԻՒՆ նոթեկ և սկսնակ գրականագէտ-գեղագէտներին։ Կազմակերպում ըն գրական-երաժշտական երեկոյթների, պարահանդէսների։

Պարբերական դրոյցներ։ Գասախոսութիւններ, գրական եւրաժշտական ցերեկոյթ և երեկոյթներ։ Հանդէսներ։ Ընթերցարանից և ժողովատեղից օգտակ կարող են բոլոր գրագէտներն ու գեղագէտները, որոնք անդամ են ՍԱԼՕՆԻՆ կամ Թիֆլ. Երաժշտ. Ընկերութեան։

Բաց է ամեն առ. 11 ժ. երեկ. մինչև 11-ը

ԲԱՅՐԱՋԱԿ ՆԱՄԱԿՆԵՐ
XXVII

Մեր հայասքն ու ձգտումները ընթերցողին արդէն յայտնի են՝ դեպի գիտակցի միջոցով արտայայտել բարին և ճշմարտութիւնը:

Ճանաչել գեղեցիկը,—նշանակում է հասնել այն աստիճանին, որից դէպի ժարդս ճանապարհ չունի այլևս բարձրանալու:

Եթէ ժամանակակից մարդը ըմբռնել է գեղեցկի և ճշմարտի իմաստը, նշանակում է, որ նա հասել է թատրոնական ամենաիսկական նպատակին: Գեղեցկի ճանաչողը անկարող է տգեղ գործ կատարել: Իսկ տգեղը —չարն է:

Մեր գէնքը գեղեցիկն ու ճշմարտութիւնն է և մենք ձգտում ենք այդ գէնքով գինուած տեսնել մեր շուրջը մարդկութիւնը



ՀԱՅԱՐԱԿԱՒԱՆ ՊԱՐՏԱՃԱՆԱՁՈՒԹԻՒՆ

Ապրիլի անցնող հոկտեմբերի 10-ին Թիֆլիսի-Գեղարուեստական Սալոնի հեռաձայնական jour fixe-ը հայ դրամատիկ. խմբի անդամ հանգուցեալ Գէորգ Պետրոսեանի յիշատակին էր և երեկոյթի ծրագիրը վաճառում էր յոգեառ նրա արբերը:

Դրական - երաժշտական, մասամբ ծանոթակցական թատերա-երաժշտական, օպերային և ռուս վրաց ու հայ դրամատիկ. խմբերի ընտիր անդամներ՝

Տ. Տ. Ե. Ս. Այդինեզեան, Ն. Ա. Սոփոտովա-Շէբուևա, Սիրանոյշ եւ Հ. Կ. Նատարեան, պ. պ. Ա. Ե. Զակուշնակ, Ի. Մ. Մատկովսկի... Ուրուշած, Լ. Մ. Յէյմին, եւ Ռ. Գ. Շէյուև:

Տեղական ռուս վրաց և հայ մամուլի ներկայացուցիչները մասնակցեցին արեւոսին վերաբերեալ զրոյցին ու ստորագրեցին իրանց թերթերում մի ծանուցումներ և մի դրամաթղին առջև երեկոյթը, կշռամբելով սքինեբս հաստրակութեան...

Իսկ մեր տաղանդաւոր նկարիչ պ. Գէորգ Բաշինջաղեան մասնակցեց, իր ընտիր նկարներից մէկը՝ Սեւանայ լճի ափին, ուղարկելով մեզ հետևեալ նամակով՝

Յարգելի բարեկամ պ. Նազարեան

Այս նկարը որոշել եմ յատկացնել հանգուցեալ դերասան Պետրոսեանի որքերին: Ուղարկելով այդ բանը Ձեզ, խոնարհաբար խնդրում եմ կարգադրէք այնպէս, որ դրանից փող գոյանայ եւ յանձնէք ում հարկն է:

Գ. Բաշինջաղեան

—

Յայտնելով մեր յարգանքը երեկոյթին մասնակցող արտիստներին, դրամատներին, լուսաղողներին և նկարիչներին

Սեւանայ լճի ափին հետաքրքիր պատկերը որոշեցինք վիճակ գցել հայերի մէջ այնպէս, որ յիրաւի սրանից «փող գոյանայ» և երեկոյթից գոյացած եկամուտի հետ կազմէր մի գումար:

—

Սեւանայ լճի ափին նկարը վիճակ է գցւում հետևեալ պայմաններով՝

1) Ներկայ 1907 թ. ռուսահայ պարբերական բոլոր թերթերի (թէ բաղաքի, թէ կայսերութեան մէջ եւ թ. արտասահմանի) բաժանորդների համար տոմսակն արժէ 20 կոպէկ, որ կարող են ուղարկել Մասնուի Քիւրծին կամ թէ այն թերթի խմբագրութեան միջոցով, որին իրանք բաժանորդ են:

2) Պետրոսեանի յիշատակին Արտիստիկ. ընկ. Թատրոնում արեւելեր ներկայացման համար տոմսակ վերցնողների համար (մրենոյն է ինչ գնանցող էլ լինի) նոյնպէս 20 կ. արժէ այս վիճակախաղի տոմսը այն պայմանով միայն եթէ Մասնուի Քիւրծին դուց տան տոմսակը, նոյն իսկ ներկայացումից յետոյ:

Մնացածների համար, որոնք բաժանորդ չեն ռուսահայ թերթերից և ոչ էլ կամ թէ Պետրոսեանի յիշատակին Արտիստ. ընկ. Թատրոնում ներկայացման տոմսակ չեն ունեցել,— 30 կ. արժէ վիճակտոմսը:

4) Առանձնակի չէ տոմսերի թիւը, առայժմ որոշած է 5000 հատ, եթէ մինչև Զատիկ ապառելու լինեն այս տոմսերը, կրկնազատակին կը գցւի վիճակը նոյնպէսեամբ դրամատիկ. ընկ. վարչութեան, խմբի և մամուլի ներկայացուցիչներից:

Սեւանայ լճի ափին Գ. Բաշինջաղեանի այս նկար տանողը, եթէ կամենայ, կարող է պատկերի փոխարէն դրամով տանել 300 ր.:

Հասցէն՝ Типлисъ Бюро Печати Tiflis. (Caucase) Bureau de *Presse*.

—

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Ներկայ ձմեռային սեզոնը սկսեց ոչ մէնքան էլ բարեյաջող հանդամանքների մէջ: Օպերային արքունական թատրոնը կապալով է տուած օպերետային դիցուհի Նորդվէյնին: Սա սեզոնի սկզբին հրաւիրել էր մի քանի հնամաշ, եւրոպական բեմերի վրայ, երգիչների, որոնք չը կարողացան համայել Թիֆլիսի հասարակութեան: Ասպա սկսուեց գասրեօղներ, նախ տեղացի տենոր Սարգսի և ապա նշանաւոր կլօրատուր սոպրանօ տ. Վան-Բրատը հանդէս եկաւ իր դիւթական գարձեալ ոչ բան ամենայնի թարմ դայլայլիկներով: Սրանց արանքում էլ Գեչա, գնչու Բարօնը, գեղանի Հելենը և նման օպերետներ հնարաւորութիւն տւին դիցուհի կապարատուին քաղցած չը թողնել արտիստներին: Թէև վատգծի մէջ պէտք է նկատել, որ արտիստներից ոմանք չը քաշուեցին և գատարանի գուռը բակնելու ու կատարողական թերթերի աշակերտութեան դիմելու:

Բանի որ արքունական թատրոնը կը մնայ ըիւրօկրատ կառավարութեան մի քանի հազար տարեկան նպատակ չնորհիւ, նրանից նշանակած դերեկցիայի իհնամակալութեան նկատմամբ, արեւոսի այս տաճարը անկարող պիտի լինի կոկել կոփել խոխանգած վարքերը մեր ժողովրդի:

—

Արտիստիկ ընկ. Թատրոնում ապատարան են գտել ռուսաց Նոր դրաման և հայոց դրամատիկական խումբը:

Ռուսաց Նոր դրաման ունի նոր բեպերտուար, արտիստները նւիրուած են իրանց գործին և համոզած, որ կատարում են մի որոշ միսիա: Ազատ բեմ, ազատ արուեստ: Ոչ մի չդիջանակի մէջ չամփոփուող արեւոտ. լոյս ժպտացուններ, սակայն մեր օրերում դեռ ոչ լիուլի իրագործելի:

—

Հայոց դրամատիկ ընկ. տեսիլ բարեյաջող հանդամանքներով է այս սեզոնը տասել մինուճար: Թատրոնը միշտ ոչ միայն լիքն է լինում, այլ և ուռաչլին կալուերի բազկաթոռներից շատերի վրա երկ-երկու հոգի են բազմում, բալոր անցքերն էլ բռնում հանդիսատեսները: Ո՞վ է կարգադրիչը մենք չը գիտենք, միայն այսքանը - կասենք, որ հոկտեմբերը 17-ից յետոյ հայ թատրոնը իսկապէս ժողովրդականացել է մինչև վերջիս ծայրը: Մենք դէմ չենք, երբ դատարկ տեղերը տրւում են աշակերատներին, սակայն մենք անկարող ենք չը կշտամբել այդ նորարարջոջ ազատ բազաքացիներին, որ արեւոտի տաճարը դարձնում են բալագան և տխուր Վայրենի գազանները անտառների խորքերում էլ ազատ են... Նա է իսկական ազատասէրը, որ գիմացինի ազատութիւն վրայ չէ բռնանում:

—

Հետաքրքրական է ինչ ուղղութիւն և ծրագիր ունի հայոց թատրոնը: Արդեօք կայ որոշ հայեացք և նպատակ մի որևէ պիէսի վերաբերմամբ, թէ վարչութիւնը բաւականանում է իր ձեռքի տակ ունեցած բեպերտուարով, կամ թէ սիրայօժար ընդունում է այս ու այն արտիստի, հեղինակի, թարգմանչի ներկայացրած նոր պիէսը հանդէս հանելով:

Օրերս արեց օրնեակ պ. Շանթի Նոր ճամբուն վրայ դրաման, թէ... Աֆիշայում տւած էր, որ այդ պիէսն արժանացել է նոյն իսկ մրցանակի: Մի հարց՝ ինչու համար. եթէ գաղափարի, այն ժամանակ թոյլ տւեք ասել, որ դրամատիկական գրւածքների համար մրցանակ տրւում է գաղափարական այն պիէսին, որ բեմական արժանաւորութիւններ էլ ունի: Սակայն պ. Շանթի Նոր ճամբուն վրայ դրւածքն այդ պէս էլ չի: Չը կան գործողութիւններ, կան խօսքեր բաներ, ազատաղաց լեզու և եթէ կամենաք անբնական դրամատեսութիւն:

Շանթը երիտասարդ դրող է և շնորհալի. անտեղիս ծառայութիւն են տրել նրա քննադատները այդ պիէսը թէ մրցանակի արժանացնելով և թէ բեմի վրայ հանդէս դնելով:

Զգալի հարւած ունեցաւ հայ թատրոնը Պետրոսեանի մահով:

Պետրոսեանին փոխարինող դերասան խմբի մէջ մենք չենք նշմարում կան երիտասարդ, շնորհալի դերասաններ, սակայն նրանք այսպէս ձեռալով հաղիւ թէ առաջադիմին: Լաւ կը լինէր, որ տարեկան գէթ մի քանի անգամ երիտասարդ դերասաններին հերթով դրամատիկ ընկերութիւնը հնարաւորութիւն տար գնալու դէպի Մոսկայ աշակերտելու Գեղարուեստ. թատրոնում, իսկ բարեպատեհ պայմաններում և եւրոպական բեմերը այցելելու:

Խմբի մէջ տ. Սիրանոյշ իր ջրոյ և խորիմաստ խաղով դերազանցում է ընկերներին: Նոր այժերից պ. Զաուշեան տալիս է առնաւատչեայ մօտ ապագայում առաջնակարգ լինելու: Աբելեան շարունակում է հմայել հանդիսականներին:

Ցնծասիրտ

ԽՄԲԱԳԻՐ-ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝
Տիգրան Եազարեան

1907 թ. ՅՈՒՆԻՍ № 1
Թիֆլիս

ԲԱՂԴԻ ՀՈԽԱՔԸ

ԳԵՎՈՐԳ
Աչեցուն Շուրջի

Գեղմ. Թարգմ.
Պ. Յարխուդարեանի

Ամենքը գիտեն, խաղը յամառ է.
Բռնես — խլուում է և ատամիկ գոռում,
Եւ այդ կենդանուն դուրս համար է
Բաղդի նշանակ աշխարհքն համարում:

Այսաեղ գոյանիկ պատկերիս վերայ,
Բարակ լարերից կապած, սեանում ես
Այսու բաղդի լուծը, որ այժմ ահա,
Նոր տարւոյ համար ցանկանում ես քեզ:

ԱՐՈՋԱ

Fantasie իրականութիւնից

Հինգ արարուածով եւ 7 պատկերով

(Նէբը արիւնաթաւալ, մոխիր ու անծուխ դարձած, երբեմն հոյակապ իմ անմման ծննդավայր Շուշուն)։

Անցքը սկսւում է ռուս-տաճկական պատերազմից յետոյ եւ իրականանում ռուս-ճապոնական պատերազմը վերջանալուց ... տարի յետոյ։

—

I գործողութիւնը կատարւում է Շուշում, II եւ III գործողութիւնները—Թիֆլիսում, IV° եւ V° գործողութիւնները—արտասահմանում։

—

ԱՌԱՋԻՆ ԱՐԱՐՈՒԱԾ

Շ Ո Ռ Շ Ո Ռ Մ

Դարձոյ անձինք I արարուածի մէջ.

Մարիամ-բաջի, 40 տարեկան այրի, գլուխը վրացնակ կապած, սև հագուստով, վայելուչ, ծանրաբարոյ, բարձրահասակ, դեղեցկադէմ։ Ոչ մի ակնեղէն ոչ ճակատին, ոչ կրծքին և ոչ մատներին։

Վարդուհի, նոյնը Վարդիթեր, Ջաւ-Վարդ, սրա աղջիկը, 16 տարեկան, բարձրահասակ, չքնաղ, նազանի շարժուածքով, դեղեցկադէմ, պարզ, բայց ճաշակով հագնուած, մի ծամ մազերից հիւսած՝ առանց ժապաւէնի։

Հայկանուշ, Վարդուհու մօրաքրոջ աղջիկը և մտերիմը, 17 տարեկան, նոյնպէս դեղեցկադէմ, կլոր տառ և զւարթ։

Գայիանէ, սրանց հասակակից դասընկերուհի։

Հուռում-բաջի, Վարդուհու հօրաքոյրը, 60 տարեկան, բարձրահասակ, պարթև, դեղեցիկ, Ղարաբաղի այանի հագուստով։

Աղասաբէք-բաջի, Վարդուհու հօր հօրեղբօր այրին, 75 տարեկան, Ղարաբաղի պառաւ կնոջ հագուստով, փարթամ կազմուածքով, կլոր տառ։

Անիմաճ-բաջի, Վարդուհունց սահմանայրը, 50—55 տարեկան, կարճ հասակով, լիզանիկ, Ղարաբաղի այանի հագուստով։

Աւետ Միխայէլեան, գիւղացի, 19 տարեկան, Շուշու ռէալական ուսումնարանի աշակերտ, Վարդուհունց տան պիշերօթիկ։

Աղազադա, ժամկոչ, 70 տարեկան, սպիտակահեր և սպիտակամորուք, երկար հասակով ծերունի։

Աւետ Յակոբ, 60 տարեկան աշուղ։

Գիւլէ, 16 տարեկան, մի աչքով կոյր, մշեցի պղեղկադէմ աղջիկ, երգչուհի աշուղի հետ։

Հուսիկ, կայտառ, 5—6 տարեկան, Վարդուհու հօրաքրոջ թոռը։

Աւմեճակ, Վարդուհու քեռու տղան, 16—17 տարեկան, արխալուղով և պինջակով։

Մարտի ապեր, օրիորդաց դպրոցի դռնապանը, 65—70 տարեկան, բարձրահասակ, ածելած երեսով։

Մալագ, Վարդուհունց տղախինը, Վարդուհուն հասակակից և նրա պէս հագնուած։

Սարիճ-Գիւլ, լեցգարար, Ղարաբաղի բանուոր կնոջ հագուստով։

Կեալուս, ծառայ Ղարաբաղի հագուստով, արխալուղով, 18—19 տարեկան։

Աղջկերք, կանայք, պատանիներ, մանուկներ, բոլորը ոճնական հագուստով, մօտ 15 հոգի։

Վարդավառի կիրակին է, իրիկնադէմ։

Ր Ե Մ Ը

Բեմը ներկայացնում է հանդիսականների դէմ առ դէմ երկյարկանի տան պատշգամբը, սպիտակ սիւնազարդ։ Պատշգամբի տակը տան բակն է՝ մաքուր սալայատակով. դէպի հանդիսականները ընդարձակ պարտէզ, որ բաժանուած է բակից մի արշին պատի վրայ շարուած սպիտակ փայտէ ճաղերով։ Պարտէզը պճնուած է վարդենիներով, մէջ տեղը սպիտակ վարդենիները կազմում են բնական մի շքեղ հիւղ (զրուցարան, պաւիլիօն), առաջից դէպի հանդիսականները բաց. մէջը մի սեղան և մի քանի աթոռներ ու նեղ տախտ, մուխաքաներով։ Պարտիզի երկու կողմից կանաչու ածուներ, և պտղատու ծառեր։ Մեծ տանձենուց կցած է չինչի (ճլորդի)։ Բակում ջրհոր չարխով. սրա շուրջը օրիորդներ և երես-

խաներ, թուով 10—11 հոգի։ Պատշգամբում կոնայք Ղարաբաղի հագուստով և վրացնակ նատուած։ Վրացնակ հագածներից չորսը թուղթ են խաղում, մի մասը կռացած պատշգամբից աղջկերանցն է նայում, միւսներն զբօսնում են։

I.

Աղջկերք.—*(Շրջապատած Գայիանէին, որ ցորդու վրայ է. երկու աղջիկ ձեռներին բարակ ցիպոտներ, խփելով Գայիանէին)* Դէ շուտ...

Գայիանի.—*Սպասեցէք, սպասեցէք, կանելս փշրեցիր, ոսկեքանքիւլ Մուշեղ, հը՞ դինջացիք։*

Աղջկերք.—*Որ ասելու էիր, շուտ ասէիր, ըլի։ (Վայր են քերում ցորդուց եւ Վարդուհուն բարշ տալիս նստացնում, մի քանի անգամ ճօճում, ցիպոտով խփում ու հարցնում)* Նշանածիդ անունն հիշնչ ա։

Վարդուհի.—*Նշանած չունիմ (ջինջին ածելով)։*

Հայկանուշ.—*Դէ, զահլա մի տար, շուտ արա ասի, մեզ էլ նօբօթ հասնի։*

Վարդուհի.—*(Չանալով կանգնեցնել ցորդին)* Եկ, *բռնիր, ես վեր գամ, դու բարձրացիր։*

Աղջկերք.—*(Ճօճելով Վարդուհուն ասելի ուժգին)* Չենք *թողնիլ ոտդ տափին դնես, մինչև չասես. (խփելով)* շուտ, *նշանածիդ անունն հիշնչ ա։*

Հուսիկ.—*(Թոնփափելով, ձեռներով հրում է Վարդուհու ոտները)* Նշանածիդ անքմը հիշնչ ա։

Վարդուհի.—*(Բարձրացնելով Հուսիկին եւ դնելով իր դողում)* Սեդրակ, Միսակ, Յարէվնակուփ։

Աղջկերք.—*(Հուսիկին խլելով Վարդուհուց եւ ջնջին սաստկացնելով խփում են). Հ՛ը, ասելու ես, թէ չէ։*

Հուսուամ-ը սջի.—*(Պատշգամբից). Աղջի, ժուրնալիդ կարի, դըհէնց կը խփեն, օշներդ ձեզ ա քընում, հասաշ, բախին կռնակը կըպարըդիր։*

Աղջկերք.—*(Ներքեւից). Հուսուամ-բաջի, խէ՞ մեր կռնակը Ասուած չի սաեղծալ, էդ խէ՞ ժեզ ցաւ չի տալ Վարդիթեվիդ ցաւ կը տայ։*

Վարդուհի.—*Վհաս չունի, հաքուշ, (դառնալով դէպի պատշգամբը) Քոզ որքան ուզում են պինդ խփեն, կըռնեվրես ցաւը կանցնի, ամմա իրանց ճըպարը կը կոտրի, էլ սապանալ չի։*

Աղջկերք.—*(Ընդհատելով Վարդուհուն, ջինջին ճօճելով, շարունակ խփում են)* Տեսնենք, տեսնենք *հիւմ ճըպարը կը կոտրի, հա հիւ ոահ կը գայ։ Դէ, շուտ (խփելով)* Նըշանածիդ անունը։

Հայկանուշ.—*Դէ ասա Աբամ, պրծի։*

Վարդուհի.—*Ոչ Աբամ, ոչ Կիրակոս, ասըմըմ նշանած չունիմ աչքադրած։*

Աղջկերք.—*Մունք հիշնչ անենք. աչքադնէիր։*

Հայկանուշ.—*(Ընդհատելով նրանց)* Ես ասեմ, ըլի, *Վարդուհուն տեղ. Աբամ, Աբամ, գեղեցիկն Աբամ, դէ դինջացինք, կանգնեցրեք ջինջին, վեր գայ, մեզ էլ նօբաթ ընի։*

Վարդուհի.—*Ասացի, որ ոչ գեղեցիկ և ոչ տգեղ Աբամ աչքադրած չունիմ։*

Աղջկերք.—*(խփելով)* Շո՛ւտ։

Վարդուհի.—*Նշանածիս անըմը Ասուած ա, Ասուած, լսեցի՞ք, դէ թողէք վեր գամ։*

Աղջկերք.—*(Շփոթած). Լսեցի՞ք։ (Միմեանց հարցնում են եւ ապա դառնալով դէպի պատշգամբի հիւրերը)* Հուսուամ-բաջի, Հուսուամ-բաջի, լսի, ասես քո աղբօր-աղջիկը հում ա իրան նշանած ընտրալ է։

Կանայք (պատշգամբից ուրախ եւ հետաքրքրութեամբ հարցնում են)։ Հա՛ւ, հա՛ւ, վարդիթեր, նշանածդ հա՛ւ ա։

Այս միջոցին փողոցի դուռը բացւում է եւ բակն են մրտնում աշուղ Ցակոբը եւ մի կոյր աղջիկ. աշուղը սկսում է նւագել սազի վրայ։

Գիւլե *(երգում է)* «Ջան մը ինչից էրզուրումի հայոց լռներէն...»։

Աղջկերքն ընդհատում են խաղը, բոլորեքեանք խմբւում աշուղի շուրջը եւ սկսում խմբովին երգել։

Վարդուհի.—*Բոլորդ էլ այստեղ եկէք, այստեղ։ (Գնում է կոր աղջկայ կռնից բռնում քերում նստացնում գրուցարանում, աշուղի կողքին)։ Ա՞յ, որ ասում եմ նշանածս Ասուածն ա, չէք հաւատում, տեսէք ինչպէս հասցրաւ մեզ սրանց։ (Դառնալով աշուղին)* «Ջան-գիւլում»-ը *ածի։ (Աշուղը սկսում է ջան-գիւլում ածել։*

Գիւլե *(երգում է)*

Արաղն էկաւ լափին տալով,
Ջան գիւլում ջան-ջան,
Ձեռ քարերին, ափին տալով,
Ջան ծաղիկ, ջան-ջան։
Որտեղ եաղիմ-ես իմ դարդը,
Ջան ծաղիկ, ջան-ջան։

Զոր գլուխս տափին տալով,
Ջան ծաղիկ, ջան-ջան։

Վ.արդուհի.—*Հրաշալի։ Առայժմս հանգստացէք, մինչև պատրաստունք և սկսենք ջան-գիւղումը։ (Աշուղն ընդհատում է նւագելը եւ մի քանի րոպէից յետոյ սկսում է նորից նւագել։ Գիւլէ (երգում է՝)*

Եօթն օր, եօթ գիշեր
Շամամն ի զօտիս Յոումշեր
Եար մղիկ գընէն դուրս չելնա,
Փշուրմի սիրտ մըզիկ խոռվնայ—
Վ.այլէ, վայլէ, վայլէ, վայլէ...

Հայկանուշ.—(*Դետնից կորելով առուտ կանաչը սեկնում է, մատուցարանում մրգերէն բերող Սարինգիւլին)։ Սիրի-սիրի, հռւմ սիրի։*

Սարինգիւլ.—(*Կանդնելով*) *Ես սիրալըմ պրծալ, իմ սիրածս չոլան Ուհանջանն ա, դու ասի տեանանք հռւմ ըս սիրըմ։* (*Մատուցարանը դնում է գետնին եւ ինքը կտրում առուտ, մատներով նրանց վրայ նշան անում, մտրուզը փափսում եւ սեկնում Հայկանուշին)։ Սիրի-սիրի, հռւմ սիրի։*

Հայկանուշ.—*Առաջ ասի հռւա, հու եաով կտրեմ։*

Սարինգիւլ.—*Էն կանանչ մեռոնը, թա դրուսաը չասեմ, կտրի (սեկնում է առուտը)։*

Հայկանուշ.—(*Կտրելով*) *Հռւ ա։*

Սարինգիւլ.—(*Այդ ժամանակ աղջկերքը ոմանք կիսաձայն երգելով, ոմանք խօսելով, բոքռալով մօտենում են Սարինգիւլին եւ Հայկանուշին). Աղջկերքը, ըահէնց ադայ Ջոկկեցէք Հ՞, տեսէք հռւա, հու, խալխս թառւան։*

Հայկանուշ.—*Հը՞, ասըմ ըս ասի։*

Աղջկերք եւ Հուսիկը.—(*Փոքրիկ Հուսիկը մի առուտ է կտրում մօտեցնում Գիւլուն, միւս աղջկերքը մէկը միւսին, իրարանցում, զւարթ, որոնում են առուտ եւ մրմեանց առաջարկում) Սիրի-սիրի (Պատասխան զանազան անուններ, Մարգարին, Աւիսին, Ալիքին, Աղամալին, Խակին, Մարդուն)։*

Սարինգիւլ.—(*Միաժամանակ աղջկերանց հետ, զարնելով Հայկանուշին). Ա՞սեմ։ Դէ, դու էլ ըս գիդըմ; ես էլ, Աստւածանից թաքուն չի, էլ հէրնէ ասեմ։* (*Կատնում է, մատուցարանը դետնից վերցնում եւ դէպի զրուցարան դնում)։*

Փողոցից դարքաը բացւում է բակը մտնելով բարձրամայն դոչում է, ջրհորին մօտենալով Աղազադան, *փայտէ երկար մատուցարանի վրայ կռնատակին մի քանի չոր լաւաշ դարսած)։*

Աղազադա.—*Ղորմի Աստւածծ, ողորժութիւնը անպակաս ձեզանից։*

Սարինգիւլ.—(*Վերադառնալով պարտէզից եւ բակը մըտնելով դէպի սանդուխտներն է բարձրանում) Էս սհաթիս, Աղազադա-պապի, էս սհաթիս բերեմ։*

Աղազադա.—(*Ջրհորից չարխով բարձրացնում է ջրով լի դոյլը եւ ծառի տակը ջրում, նախ խմելով դոյլից ինքը) Ժամը պրծալ ըմ, հնհան եկալ։ Իրէգի իրուգինի տէլտէրնեերին նըհետ կարայի վէչ կեաժ Զաուվարթին ոօնահմբուրթիւնը շնորհաւոր անեմ, կարք կար կատարելու, Ստորցուն նհետի քընացալ։*

Մարիամ-բաջի.—(*Պատշգամքից*) *Աղազադա, քընա բազէան, չայ պրկեժ խմի։*

Աղազադա.—*Ապի, շընհաւէր ընի Զաուվարթին ոօնահմբուրթիւնը, ծլի, ծաղկի, համաշա զաուում, զաարարում զըրթարւած, սաղ հու ուրախ կհնա։ Սուրբ Կիարմիր Աւետարանը լարեկօս ընի։*

Մարիամ-բաջի.—*Աղազադա, մատաղը լոխչու Ը՛լ լաւ հատաւ։*

Աղազադա.—*Հէ՛ Աղսաքէթ-բաջին կաղնած չէր, սհնէրն էլ լիասկին, անհոգնելի ընի։ Տէրտէրնէրն էլ լաւ վայելեցին։*

Աղսաքէթ-բաջի.—(*Պատշգամքից*) *Հալբաթ տայ, որ բօլ-բօլ էր, ունթուհնելի ընի, մեռնեմ նրա ոննըտակին։*

Աղազադա.—*Ագի, Աստւածով էս պարիկենդանին Զաուվարթը կեարմուր Աւետարանը «Թագաւոր գոլով» ասելիս կը պաչի։*

Հուռւում-բաջի.—*Աստըծաւ, Աստըծաւ։* (*Այդ խօսակցութեան միջոցին պարտիզում աղջկերքը շարունակում են «սիրի-սիրին», փորրահասակները ջինջի են ճօճում եւ միմեանց հարցնում «նշանածիդ անըմը հի՞նչ ա», իսկ զրուցարանում աշուղը նւագում, պատշգամբի հիւրերից ոմանք իջնում են պարտէզ՝ Աղսաքէթ-բաջին, Հուռւում-բաջին, երեք ուրիշ վրացնակ հագնւած երիտասարդ տիկիններ. երեխաները փաթաթւում են սրանց. վրացնակ հագնւած տիկիններից մէկը բարձրանում է ջինջու վրայ եւ սկսում է օրօրւել։ Սարինգիւլը մի ձեռին 3 լաւաշ, ուսով դցած մի գորգ—երկար (եան), մի եան ոշակ, հացը տալիս է Աղազադին, իսկ գորգը եւ ոշակը գցում է զրուցարանի մօտ, ծառի տակ)։*

Մարիամ-բաջի.—(*Սանդուխտներից իջնելով*) *Աղազադա, քընա բազէան չայ խմի, մազա կեր։* (*Փորրիկ Հուսիկը դիմաւորում է պարտէզ մտնող Աղազադին)։*

Հուսիկ. — (*Դէմ է անում առուտը)։ Ժամհար-պապի, սիրի-սիրի, հռւմ սիրի։*

Աղազադա.—(*Գրկելով երեխային*) *Վո՛ւյ, բալան կըծեմ, քեզ սիրեմ, քեզ, նախշուն կուկու. հռւմ բալան ըս։*

Հուսիկ.—*Համ մայրիկին, համ հայրիկին։*

Մարիամ-բաջի.—*Հուռւում-բաջուն թոռնըն ա։*

Աղազադա.—*Ախըր ասըմըմ, վէր մեր ժողովուրդի բալոցան չի. մեր ունցը լոխչու մանկերիս նըման ըմ գընանչում։*

Հուռւում-բաջի.—*Էլլա ժողովրթիտ ճըղնան ա, օրհնի։*

Աղազադա.—*Օրհնեալ ընի, ջուրն իւրան քընեացած ճանապարհն էլլա կը քընա։ Հուռւում-բաջի, պարտական մնաս, թա էլլա էդ ճօղնըդ մեր պայծառ եկեղեցու պիրքը չը քըցես։*

Հուռւում-բաջի.—*Հէ՛, մըզրկացունց եկեղեցին խաւար ա։*

Աղազադա.—*Մերին հասնիլ չի։* (*Աղազադան ծոյից հանում է մի նշխար տալիս Հուսիկին եւ ինքը դնում է դէպի զրուցարան)։ Հուռւում-բաջի, էս սուրբ նշխարը ամանաթ տւի, Տէր-Աւշաւին թխածն ա, Մարասի վանքի սուրբ Գրիգորիսի ցորենից ա, հա։*

Հայկանուշ.—(*Ջմայլւած Գիւլու երգով, որին շրջապատել են նորեկ կանայք եւ զրուցարանից հանել ծառի տակը խօսացնում են) Աստւմ ես անունդ Գիւլէ ա, հէրնէ Գիւլէ։* (*Դառնալով գէպի պատւու կանայք). Բուակէն, խօյլա, մեզմինըմ էլ Գիւլէ անըմ կայ։*

Աղսաքէթ-բաջի.—*Գիւլ ծաղիկ ասիլ ա, Թորքերէն ա։ Մունք էլ օնհնք, քըմատաղ, խէ՞ չօնհնք։ Թազագիւլ, Ազիզգիւլ։*

Հայկանուշ.—*Սարնգիւլ։*

Հուռւում-բաջի.—*Մարեանգիւլ, Անագիւլ, Խասագիւլ, Նանագիւլ։*

Հայկանուշ.—*Բա Մուշում էգպէս անուններ չը կան, հէնց մէնակ Գիւլէ են ասըմ։*

Գիւլէ.—(*Գաշւելով*) *Մայրիկս էր ինձ Գիւլէ ասըմ, անունս Գիւլլուզար է։*

Վ.արդուհի.—(*Ջինջու կողմից ժօտենալով*) *Ինչ հիասնալի անուն, Գիւլլուզար։*

Աղազադա.—*Զաուվարդ խանըմ, շընհաւէր ընի ոօնահմբուրթիւնս, մուրազիս հասնեա։ Համիշա սօրւայ նման ուրախ ընեա։*

Վ.արդուհի.—*Քեզ հոգի արքայութիւն, Աղազադա-պապի, ևկ, նոսա, չայ խմի, այ Ակուպ-տպօր կօշտը քընա։* (*Ցոյց է տալիս դէպի զրուցարանը։ Մալտը մա-

տուցարանում երկու բաժակ Թէյ, հաց, միս, պանիր, մի շիշ դինի է տանում նրանց). Գիւլուզար, ուրեմն քո և իմ անունը միևնոյնն է, Ջաւվարդ, գիւլն էլ վարդն է, զարն էլ զառն է: Աղջկերք, էսօր Գիւլուզարի ծննդեան խմբութիւնն էլ է: Դէ, շուտ արէք, հագուեցէք, ըսկսենք «Ջան-գիւլումը», մենք խսկոյն գալիս ենք: (Բռնում է Գիւլուզարի ձեռքից եւ վազելով պարտէզից դուրս գալիս ու սանդուխտներով Գիւլուզարի հետ բարձրանում):

Աղաբէք-բաջի.—(*Վարդուհու ետեւից*). *Բա հօ՛րըս քընըմ, քըմատաղ, ժըմաժէմք կըտրեց, շուտ արէք, վիճակը քըցեցէք, պրծէք, քընանք: Մըհէկ ապերը ոօն կընի եկած:*

Մարիամ-բաջի.—*Աքէր, խէ՛ ըս թահթի ընկնըմ, հալա օրըս հինչ ա քըսօր:*

Մարի-ապեր.—(*Բակից մտնում է եւ կամենում է բարձրանալ սանդուխտներով*):

Մալագ.—(*Այդ ժամանակ իջնում է չինական մի սափոր ձեռին*): *Մարտի ապէր բոլորն էլ բաղչըմն ըն, ընդեղ քընա:* (Աշուղը նւագում է եւ ինքն իրան կցկտուր երգում):

Հայկանուշ.—*Ոհօ, Մարտի ապէր, բարի ըիւգիւն: Էլլա էն Մարտի ապերը, էն Մարտի ապերը, մունք պառաւեցինք, Մարտի ապէրն էլլա էն, էլլա էն:*

Մարտի ապեր.—(*Ընդառաջ գալով*) *Դու էլ էն չարչամբա Հայկանուշը, էն չարչամբա Հայկանուշը: Էլլա էն բախան, էն բախան: Վարդուհին ո՞ւր ա:* (Նկատելով Մարիամ-բաջուն). *Մարեամ-բաջի, շնորհաւոր լինի օրիորդի ծննդեան խմբութիւնը: Ասուած քեզ բախշի: Ինչպէս ուսումնարանըմը օրինակելի, առաջին աշակերտուհին էր, այնպէս էլ քաղաքիս աչքն ա: Ասուած բաշխի, մխիթարեւս, վայելեւս: Մեր պարծանքն ա, մեր ուսումնարանի պատիւն ու անբիծ բարձրացնողը:*

Հայկանուշ.—*Նաւաշ, նաւաշ, շատ լաւ-ձրացրիր, երէընդնի ընդեղից ջօթ-ջօթ ընի:*

Մարտի ապեր.—*Ինչո՞ւ ես նախանձում. ի հարկէ որ, յարգս յարդաւորաց, պատիւս արժանաւորաց: Մին էկ ուսումնարան, լսի, տես է, երկու տարի ա դուրս էք եկալ, առտեսատ ստացալ, ամմա էլլա ամեն օր օրիօրդ Վարդուհու անունն ու խօսքը օրինակ ա թէ պարոն տեսչի և թէ ուսուցիչների ըներանին, թէ քեզ նման չարչամբաներին:*

Հայկանուշ.—(Ծաւալով): *Վարդի, Վարդի, շուտ, շուտ, երկու ձմերուկ կըռնըտակիդ դիր էկ, թա ձմերուկ չընի, կարկաժ դիր, հօլա կը քընա, ամմա մդայթ, եր չըքըցես ջօթ-ջօթ անես:*

Մարիամ-բաջի.—*Մարտի ապեր, համեցէք ընդեղ* (ձեռքով ցոյց է տալիս դէպի դրսւցարանը): *Մալագ, չայ բեր Մարտի ապօր մըշար:* (Աշուղը դարձեալ նւագում է):

Հաւուռւմ-բաջի.—*Ջաւվարդին քէֆին էլ սօր քէֆ չի հասնիլ: Աղբատ Ղազարն ա պատկաս, էն էլ վեր ընէր, քըսկարինքը կը ըրուսուէր:*

Աղաբէք-բաջի.—*Հաւուռւմ, դու էլ խէ՛ շատըս: Հիմնչ անենք, դրանց Աստւած չի ըստեղծաւ: Հէնց դրանց կերածն ա Աստծուն ընծռունելի:*

Անանան-բաջի.—*Երանի էն քօլին, վէր արջը նըրանից կը խըռաւի: Ամեն մին մարթի իւրան տեղն ու օրն օնի: Ղորթ ա ասըմ Հաւուռւմը: Սրանք լաւ ըն ժօր ու աղջկայ կըռքները համբարալ: Լաւ ա հալա, վէր օտանն խմեն, տրանաւ ուզի կինան: Մինչի փէջընները ծօյնեըն էլ լցնեն վէչ, տիւրուր չըն կալ տեղներան: Մին Աստւած սիրէք, մին թամաշա արէք, շնաքարաժանը լիգը հունցըն տըրալ տրանց առաջին:*

Հաւուռւմ-բաջի.—*Իա, լիգը բուխիլ գինին չըս ասըմ, լիգը արաղին էլ շուշան: Մին ընդեղ մըտէկ ասըա է, ժին սաղ եմիշն էլ առաջներին, ասես կատրաժը իւրանց հէրիք չընի:*

Անանան-բաջի.—*Տրանց ուրախութիւնն էլ էատ ըլի: Ասես սրանք էլ ծնւալ ըն խալխին լիըցնելու ժըհար:*

Իջնում է սանդուխտներով Վարդուհին Գիւլու հագուստը փոխած, երկու ծամ արած նրան, զուգած սպիտակ հագուստով, սպիտակ Թաշկինակով կոյր աչքը կապած, Ձեւանցուկ մօտենում է պառաւներին: Աղջկերքը շրջապատում են նրանց, աշուղը պարի եղանակ է ածում, Հայկանուշը պարում է նրանց առաջ:

Վարդուհի.—*Պատիւ ունիմ ներկայացնել օրիօրդ Գիւլուզար Գիւլնազար, իմ ընկերուհին:* (Աշուղ Յակոբը զարմացած դուրս է գալիս զրուցարանից, շփոթւած նայում Գիւլուն, դուրս են գալիս եւ միւսները):

Մարտի ապեր.—*Օրիօրդ շնորհաւոր լինի ծննդեան խմբութիւնդ:* (Գլխարկից հանում է մի ինձորի վրայ շարած գոյնզգոյն մոմակներից ծաղկէ փունջը, մի մատիտի վրայ ամրացրած). *Ուսումնարանի ծաղկանոցիցն է: Սրանից աւելին չը կարացի բերեմ քեզ համար. օրիօրդ, կը ներես:*

Վարդուհի.—(*Զգացւած, սեղմելով Մարտի ապօր ձեռը*). *Ամենաթանգագին և նւիրական ընծան: Շատ շնորհակալ եմ: Ի՞նչպէս է Սաթիկը, ինչո՞ւ չէիր բերում հետդ: Շատ ուրախ կը լինէինք ամենքս էլ: Համեցէք, համեցէք չայ խմի:*

Աննման-բաջի.—*(Դէպի կողքի նստածները)։ Աղջի, տեսիք, տեսիք։ Հըւատաս վէր մին Թաւադ, իշխան եկած ընէր, սրա կէս պատիւն էլ չը ըստանար։*

Հայկանուշ.—*Դէ շուտ արէք, սկսում էք, սկսենք, (երգում է)՝*

Ջան գիւղում, ջան-ջան,
Ես աղջիկ եմ ալ կուզեմ,
Բոխչաս ծալեծալ կուզեմ,
Երը որ եարիս տուն կերթամ՝
Գոտիկս թիրմա շալ կուզեմ։

(Սարինդիւլը մի սեղան վերեւից բերում է քանում, սուփրոյը դնում. Գալուստը մեծ սամովարը բերում է պարտէզ, դնում ներքեւ, դնած գորդն կողքին, Մալաղը մատուցարանում Թէյի սարքը բերում է եւ չայնիկը Թէյ դնում. սկսում է բաժակները լւանալ)։

Աննման-բաջի.—*Մըհէկի չը՞ խմեցինք բալկոնուժը, մին էլ Թազադան տընդըլդաւա ըստեղ ըք սարքըմ. աղջկերքը կըքընին հօրի զօլին կը խմին կը կին։*

Աղազադա.—*(Ջրուցարանից դուրս գալով). Ազի, էքուց վէր վախտս հանգիստարան կեալու։ Ես քընամ։*

Մարիամ-բաջի.—*Առաւօտանց սարինին. հը՞, խոյլա, առաւօտը լաւ չի՞ (դառնալով դէպի կանայք)։*

Հայկանուշ.—*Մունք էլ կը գանք, Մարիամ-բաջի, ամմա վէչ առաւօտը, քըսօրա եար։*

Վարդուհի.—*Աղջկերք, սափորի շուրջը։ Ո՞վ է կամենում ժողովէլ վիճակը։*

Աղջկերք.—*Ես, ես, ես։*

Աննման-բաջի.—*Աղազադա, կաց ես էլըմ կեալիս, ժըժաժէմք ա, ինձ անգկըցրու։*

Հայկանուշ.—*Աննման-բաջուն լաւ մդայթ կաց, չը վախցընին (ըրքիջ)։*

Աննման-բաջի.—*Ի՜հէյ, ա, լաճաս, խօսքըդ ճընանչես, դուք կապընները կըտրած վէչ ցերեկ ասացէք, վէչ գշեր։*

Հայկանուշ.—*Մունք արխային ընք, վէր մեզ Թամահա անող չընիլ, կողքներիս նի եկող չընիլ։ (ըրքիջ)։*

Աննման-բաջի.—*Մալագ, ծախկես, չադրաս ըեր, ես քընամ։*

Մարիամ-բաջի —*Պլակին, Թող Աղազադան քընա, հինչ ըս Թահթի ընկնըմ, մեր տղան քեզ կը տանի։*

Հայկանուշ.—*Աննման-բաջի, մեռնիլ կա, քեզ բաց Թողիլ չը կա. կապը կըտրածը քեզ սաղ սալամաթ տուն կը հասցնի, արխային կաց։ Աժմա ժէկ պիտմա Ջան-դիւլում ասես մեզ նըհետ,*

Աղջկերք.—*(Միաբերան)։ Հա, հա, անպատճառ, պըլակին, Աննման-բաջի, առանց քեզ լաղաթ չօնի։*

Աղազադա.—*Մարիամ-բաջի, պարի քշեր, օրհնէի տօնա։ Մըհէկ քըշերաս, Թա քսօրա եար։*

Հայկանուշ.—*Քսօրա եար։*

Վարդուհի.—*(Մի կողմ քաշելով Հայկանուշին)։ Աղազադա ապեր, մին մինուէթ ժոհլաթ տուր, կաղնի պալիս եմ։*

Աղազադա.—*Թէկուզ մի սաղ տարի, քըժատաղ, հինչ դուլլուզ օննա. (Վարդուհին եւ Հայկանուշը խօսում են եւ աւելի լուրջ արտայայտութիւն են ստանում նրանց դէմքերը)։*

Ակուպ-ապեր.—*Շէն կենայ շէն օջաղը, Գիւլի, դէ քընանք, շատ եատացինք։*

Հայկանուշ.—*Բրաւօ, հիանալի։ Մարաի-ապեր, Մարաի-ապեր, յարդս յարդաւորաց, ձրաեղ ես, ով հողեղենը՞դ.*

Մարեի-ապեր.—*(Ջրուցարանից դուրս է գալիս չայի բաժակը վերջացնելով)։ Ըստեղ ըմ, ըստեղ, այ չարչամբա։*

Հայկանուշ.—*Խելքի տօպրակը, ուսումնարանիդ փառք ու պարծանքը քեզ յանճնարարութիւն ունի։*

Վարդուհի.—*(Մի կողմը քաշելով Ակուպ-ապերը)։ Ակուպ ապեր, ժի խնդիր ունեմ քեզ։*

Ակուպ-ապեր.—*Հրամայի, իմ ջոխա աչքիս երան։ (Նրա հետ մի երկու րոպէ խօսելուց յետոյ)։*

Վարդուհի.—*Աղազադա-պապի, աերաէրներին յայտնիր. որ էքուց կէսօրից յետոյ ժամը չորսին ընդհանուր հոգեհանգիստ պիտի կատարւի Փափազեան հայր-սուրբի գերեզմանի վրայ։ Քահանաներից ով կամենայ զարիրների համար գերեզման օրհնի, բոլորը Թող ընտեղ գան, շնորհակալ կընենք։*

Հայկանուշ.—*Հինչ շնորհակալ, Աղազադա-պապի, էքուց քսօրա եա խնամականչ ա հանգստարանում։ Լաւ չայ, լաւ Թիքա, լաւ եմիշ, էնու գեօրա էլ իւրան դասգաուլըղը։ Թամադան էլ պլակինն ա, Աննման բաջին։*

Աննման-բաջի.—*Է՜հէյ, այ լաճաս, ինճանա հինչ ըս օզըմ։*

Հայկանուշ.—*(Դառնալով կոմիկաբար Մարաի-ապօրը)։ Վճռած և ստորագրած է։ Ձերդ նախարարական մեծութիւն, վաղը կանուխ առաւօտեան ի լուսաբացին նեղութիւն կրնայ տալ ձմեռային ուսուցիչքս, պաշակերտուհիս, դկրօնուսոյցս և պնամանաւանդ պատկին մեր Ներսէս վարժապետ, զի շնորհ բերնեցին զկնի կէս աւուր ի վերին Երուսաղէմ։ Օ՜ ոչ, ոչ, զվերին Երուսաղէմ, մեղա, մեղա, զվերին հանգստարան, վասն ներկայ լինելոյ զհանդիսաւոր հոգեհանգստեան, որ անդուգական մասնագիտութիւն աղգին հայոց պանծալի շառաւիղին Թորգոմեան։*

Վարդուհի.—*(Ընդհատելով), Հայկանուշ, ամեն լուրջ գործ մասխարա ես դարձնում։*

Աննման-բաջի.—*Էտ վարպապետի քարոզը շատ էր խըռթին, պան չը հասկացինք. ամմա ես իմ Աստուածը լաւ քարոզ էր։*

Վարդուհի.—*Պլակին, քարոզ չի։ Մարտի ապօրը խնդրում է, որ էքուց ծանուցում անի վարժապետներին, օրիորդներին, որ կէսօրից ետ հանգստարան գան։ Մարտի-ապեր, աշակերտուհիներին բոլորին էլ ասի, որ հետները ծաղիկներ, չայ, շաքար, հաց, միրգ, ժի խօսքով ով ինչ կամենում է բերի, աղբատներին, քահանաներին չայ, հաց ենք տալու։*

Հայկանուշ.—*Երկու կոժ պինի, մին էլ յիսուն Թիքա ես կը բերեմ, Վարդիթեր։*

Աննման-բաջի.—*Դէ հալբաթտա, էգ հինչ խօսք, ամեն մարդ իւրեան ժարիֆաթը կը պանըցնի։*

(Այդ ժամանակ Գալուստը ծառից կախում է կտաւէ գունաւոր երկար լապտերը եւ ապա վառում։ Մուէնն ընկնում է, լուսնեակն սկսում է երեւալ։ Պատուները չայ են խմում, ոմանք զբօսնում են։ Հայկանուշը երկու օրիորդի եւ մի կնոջ հետ ծաղիկներ են ժողովում եւ պակաս հիւսում)։

Վարդուհի.—*Ուրեմն ամեն ինչ որոշուեց։ (Մօտենալով մօրը հետ խօսում է, որը գրպանից հանում է քսակը տալիս նրան։ Մի կողմ քաշելով Ակուպ ապօրը). Դուռ էլ Ակուպ ապեր, բոլոր աշուղների հետ վաղը կէսօրից յետոյ հաւեցէք։ (Տալիս է մի ԹղԹադրամ րուբլիանոց). Իսկ երեք շաբԹի օրն էլ, երը ուզում ես, եկ, Գիւլու մասին խօսանք։*

Ակուպ-ապեր.—*Բու կամքն ա, ես նաքարա ըմ, վէր քու առաջին խօսեմ։ Աժմա մեր օրն էլ էքուց ա, վէր Գիւլին հետս ըներ, գօնիա մին երկու աքասի աւել Աստծու գընձէնակ կընգնէր։*

Աննման-բաջի.—*(Նստած տեղից). Էը՜, աշըղ Ակուպ, հինչ ը՞ս ըտեղ քըսըվըսը անըմ, ՋաւվարԹ, մին աքասուց աւել տաս վէչ։*

Վարդուհի.—*(Գսակից հանելով մի երկու արծաԹ դրամ էլ է տալիս կրկին նրան). Ես էլ ինչ առ։*

Ակուլ-ապեր.—(Դրամը վերցնելով)։ Չէ, չէ, միգամ ես Աստուած չունեմ, շատ-շատ բօլա, ամմա խօսքի վըհար ես ասացի։ Շափաղաթըտ անպակաս ընի։ Ինչ-բաւանց մունք ընդեղ կընենք, արխային կայ։ Որի՞շ դուլուզ։

Հուսիկը իր հասակակից մի տղայ երեխի հետ մի փոքր բարձի վրայ, Թիրմա շալով ծածկած, վրան ծաղկեայ մի պսակ։ Սրանց հետևից աղջկերք եւ մատաղահաս հարսներ։

Հայկանուշ.—*Ողջոյն, փառք և պարծանք հանճարին, կեցցէ գանւանակոչութիւն։*

Աղջկերք, հարսներ.—*Կեցցէ, կեցցէ Զաւավարդ, կեցցէ Վարդուհին, Վարդիթեր. (Բոլոր կանայք խմբւում են նրան շուրջ)։*

Հայկանուշ.—*Էը՞, Ակուլ-ապեր, հինչա փասա-փուսադ վըհաքըմըս, սադդ հանի ղաբիցը։ Կեցցէ, կեցցէ գյարդա յարլաւորացը։ Մարտի ապեր, հինչըս սուս արաչ։ (Երգում է սափորը ձեռին ջան-գիւղում պարելով հաւարում հանդիսականներից վիճակ, իւրաքանչիւրը մի-մի առարկայ դնում են սափորի մէջ։ Իսկ ինքը Հայկանուշը մատները թրջում է ջրով ցողում նրանց։ Աչուղը նետում է ջան գիւղումը։ Կըցոտոր այս ու այն երգում են։ Երբ վիճակները ժողովում է պրծնում, սափորը դնում է տեղանի վրայ, ծածկում գունաւոր թաշկինակով, իսկ աղջկերքը սափորը ծաղկաձակ են անում, որ համարեայ ծածկւում է ծաղիկներով)։*

Մարտի-ապեր.—*Ուսումնարանի առաջադէմ աշակերտուհիներից մէկն էր, բայց չարչամբա, չարչամբա, նոյնն էլ մնացել է։*

Անմման-բաջի.—*Ա՛յ, ապրես, Հայկանուշ, հա՛։*

Հայկանուշ.—*Բա՛ ասըմըս լաճառ, կապը կտրած։ Դէ վէր կապը կապած մընար պառաւի էձին նման, էլ պառաւը կը կարար մըհանա քանէը, էձին եննան քընար, սէյր դուրս գար։*

Հուռուսի-բաջի.—*Էս տղերքը հի՞նչ եա ընդին, կէս քշէր կըտրեց, ձի չընեն քըշած, եր ընկած, քեալագուլթիւն արած, թեանգ հալըցրած, մին փորձանք պէրած։*

Հայկանուշ.—*Աթենց Հարաբետին ձիանցը չանը տիւս կեա։ Նըրանք մի Սարիբէգաւ, Խանքեանդաւ ռազի կենացող ը՞նն։*

Աղջկերք.—*Ժամանակ չէ՞ սկսելու։*

Հայկանուշ.—*(Պսակ բռնած օրիորդներին առաջ է քաշում, ապա բռնելով Վարդուհու ձեռից կոմիկաբար). Զանազան և զարմանազան հանդիսականք, արք և կանայք, ուսուերք և դասերք Սբօնի, խնամի և պլակին, խոյլա և հաքու և ամենեքեանդ ժողովեալքդ, գալեզարդ ներկայացուցիչն եկեղեցու և դու, գնահարարն լուսաւորութեան, որ զաստանեակ սերունդ անեալ, աճեցեալ, հասունացեալ և թառամեալ է նման, չանչախիս...*

Աղջկերք.—*(Բրթիչ) Կարճ կապի, հաւը չը տանեա։*

Հայկանուշ.—*(Շարունակ). Եւ դուք գկուսանքդ հայոց աշխարհի, զազգ ներկայացուցիչք գեղեցկի, վշտի և ցնծութեան և դու գուսան Ղարաբաղ աշխարհի օրհնեսցէք գնորապսակեալն). (Վերցնում բարձից պսակը պտոող դնում Վարդուհու գլխին։ Բրթիչ, ուրախութիւն, ցնծութիւն։ Ջան-գիւղում են երգում, աշուղն էլ նւագում է)։ Լուսթիւն և համբերութիւն, ոչ է հասեալ դեռ գժամանակ. (Վարդուհին պսակը գլխից կամենում է վերցնել, Հայկանուշը թոյլ չէ տալիս եւ երկու կողքի կանգնած աղջկերանց ձեռքերից բռնելով նշան է անում, որ պահեն Վարդուհու գլխին)։*

Անմման-բաջի.—*Վայ ծաղկես դու, աղջիկ։*

Հայկանուշ.—*Ընկերուհիներ, (Լուրջ արտայայտութիւն ընդունելով)։ Արդէն յայտնի է ձեզ, որ Վարդուհին այս աժառայ վերջը հեռանում է մեզանից, ով գիտէ որքան ժամանակով։ Ո՞վ գիտէ քամին մեզ էլ ուր տի դցէ, բայց ուխտենք այս նշանաւոր օրը, ուր էլ լինենք, միշտ չը մոռանանք մեր ուխտը։*

Աղջկերք.—*Ուխտում ենք, անէձք ուխտադրուժին։*

Հայկանուշ.—*Վարդուհին ընտրել է իր համար մի շաւիղ, ցանկանանք նրան աջողութիւն։ Ես չեմ երկբայում, որ Վարդուհին Թիֆլիսի գիմնազիօնն էլ, երաժշտական դպրոցն էլ կաւարտի և մեր լուսաւորութեան նախարարին սևերես չի թողնել (բրրիչ)։ Ես հաւատում եմ, որ նա իր ուղին կը շարունակէ. ցանկանք նրան միայն ոյժ։ Մարխած-բաջի, ինաս բարեաւ, գնաս բարեաւ, բարի ճանապարհ, մենք էլ կը գանք Վարդուհու հետից, նրան մենակ չենք թողիլ։*

Աղջկերք.—*(Երգում են) «Էր հեռանաս քո մայրենի աշխարհից, սերտ բարեկամ կարօտ թողես քեզանից»։*

Հայկանուշ.—*(Հումորիստիկ-կլասիկ ձեւով). Հեռանայ, որպէսզի հայրենիքին բերի չքնաղ օրեր։*

Վարդուհի.—*Ընկերներս, ես դիտաժար ընտրեցի վաղը, մեռելոցի օրը Հայր-Սուրբի գերեզմանին կատարել ընդհանուր հոգեհանդիստ։ Ես նկատեցի, որ խոյլին, հաքուին այնքան էլ հաճելի չէր այդ ընտրութիւնը։ Պիտի օրհնւի մի գերեզման, որի տակ ոչ ոք չի թաղւած։ Սակայն, նայեցէք, պօլսեցի գիտնական վարժապետը գալիս է աշխարհի այս ծայրը, այս ժայռի վրայ կառուցանում իր յաւիտենական օթևանը, թողնում իր սրտի բեկորն այստեղ մեզ աւանդ, իր անմահ ոգու հետ և ինքը վերադառնում իր ծննդավայրը։ Հողը քաշում է նրա հոգեղէնը, բայց նրա ոգին սաւառնում է մեզ վրայ։ Երախտապարտութեանս ամենաթոյլ հաւատիքը թող լինի վաղայ հրաժեշտիս հանդէսը։ Իսկ այսօրւայ մեր ցնծութիւնը կրկնակի է. երկինք պարգեւեց մեզ Գիւլիզարին, որին խոստանում եմ իմ բոլոր ոյժերը և որն այսօրւանից անրաժան է հետս։ Ո՞վ է սա. (Առաջ է քաշում Գիւլոն) բազմաչարչար հայրենիքի մի ծաղիկ, ոսոխի ձեռքով կտրւած, տրորւած և բազդին նետւած։ Սակայն անթառամ են մեր հայրենիքի բուրաստանի այս ծաղիկները և քրդի, համիդիէի արիւնաթաթախ ձեռքերը շատ են թոյլ սրանց ոչնչացնելու համար։ (Գլխից վերցնում է պսակը եւ տալիս Գիւլոյին)։ Ա՛ռ, Գիւլոուզար, այս պսակը և պահիր իբրև հաւատիք մեր անրաժան և անթառամ կապի։ (Համբուրւում է նրա հետ եւ ձեռքից բռնելով կազմում են շրջան, սկսում ջան-գիւղումը։ Մի տուն ասելուց յետոյ, Հուսիկին բարձրացնում են, որ ձեռքը ծաղիկների եւ աղուխի տակից տանելով, հանում է սափորից մի մատնոց եւ տալիս Հայկանուշին)։*

Հայկանուշ.—*Ո՞ւմն է այս մատնոցը։*

Զայներ.—*Իմս չէ, իմս չէ։*

Հայկանուշ.—*Անմման-բաջուհն ա, Անմման-բաջուհը, մի տեսէք, ինչպէս է չը դիտանալը դրել, սուս արել։*

Անմման-բաջի.—*Ա՛, լաճառ, ինձանա ձեռք չըս եօր անըմ ըլի՞։ Ինձ տեղ Գայանը կասի։ Ա՛խճի Գայան ասի։*

Հայկանուշ եւ միւս աղջկերք.—*Մեռնիլ կայ, ռադի կենալ չը կայ։ (Բռնում են Անմման-բաջու ձեռքը)։ Դէ, սկսի։*

Անմման-բաջի.—*(Մի փոքր չամուխամ անելուց յետոյ երգում է՝*

Աղջիկ, աղջիկ, ալ աղջիկ,
Աչքերը չալ չալ աղջիկ,
Ջան գիւղում, Ջան-Ջան.
Իմ հերանց տան հարս պըտիր,
Իմ քիրը քեզ տալ աղջիկ,
Ջան ծաղիկ, Ջան-Ջան։

Աղասաբեք-բաջի.—*Լաւ տեղիցն ես վըռնըցրալ. ամեն, Աստուած լսող և կատարող ընի, բարով էդ չալ-*

Աղասաբէկ-բաջին եւ փոքրիկ Հուսիկը

չալ աչքերով չեարչամբա լաճառին (ակնարկելով դէպի Հայկանուշը) քու հէրանց տուն հարս տանեա։

Բաղնում են չարուչով դարպասը։ Թառի ձայն եւ Ծուրբերվէն շըրնաստա են երգում զիլ ձայնով։ Գալուստը վազում է դարպասը քանում, մտնում են 5—6 հոգի, տեղական, բէսլիստի եւ եւրոպական հագուստով, երկուսը ձիի վրայ մէկը նրանցից կամենում է ձիով պարտէզը մտնել։

Աղասբէք-բաջի.—*(Բղաւում է) Եանկ էլ օյին օնէք. քը՞շտացիք վէչ էդ ձիանցիցը։*

Աւմեճակ.—*(Արտասանում է ձիի վրայ նստած, մտնելով պարտէզը). Նժոյդ ձի նստած, բիխերս ոլորած...։ (Միւսները մտնում են նրա ետեւից, ձիանքը բակումը Ծողնելով, բարեւում են։ Իրարանցում)։*

Առամ.—*Այս ի՞նչ է, առանց մեզ արդէն սկսել էք ջան-գիւլումը։*

Հայկանուշ.—*(Շիշից ջուրը նրան ցողելով)։ Բայց ոչ վերջացրել։ Ի՞նչ, կամենում էիք մինչև առաւօտ ձեզ սպասէինք, որ դուք քէֆներդ արամիշ անէիք, պըրծնէիք և էդպէս կուբուշ կարած դայիք։ Ո՛ւր է ձեր խոստումը. ժամը չորան է, թէ՞ ասը։*

Աւմեճակ.—*Դէ, խըրէկ կուրկկուա արա։ Մին իմաց պանը, հննան։*

Հայկանուշ.—*Հի՞նչ իմանամ. չէմ իմանում. Սաբիրէգին տակաւը աւած կընէք, Շուշայ, Ղանքանդու, Ղայբալէի, Բէխի-ախպըրի տակաւը դուս եկած։*

Առամ.—*Թիմոյ չըին էլ։*

Գալուստ.—*(Ցանկիմանելով)։ Եանկ Աստուած չընէք. մեղք չի՞ն այդ ձիանքը։*

Հայկանուշ.—*Հալա մեղանից էլ նեղանում ըն։*

Աւմեճակ.—*Հայկանուշ, քու արևն եմ ասում, կը մխիթարիր, ախսոս մեզ նըշոտ չիր. ամմա քըշալընք հա։ Արամին ձին թողալ ընք Մուղդուսուն աղպուրումը չուր բերող Արթունին քըշային, վէր բերի, մին հանգաւ կաօթնեցուն յանձնի։ Լաղաթ, հընչ լագաթ։ (Երգում է) Թաւլան քիմի նա չաքմըսան իւղումը, իւղումը։ Արաժ, հանի թառըա։ (Արամը սկսում է ածել)։ Կեալուսա խուրջինը բեր։ Մին տեսէք հինչեր ընք ըսըալ ձեզ ժընար չ։ Մատաղ, Սարիբէգից, Ակուզ-Հայրապետից. դասդեաբլըղն էլ Պեխի ախպրի շուշա-խիար, Թիմոյ Ջրիցն էլ զէլդերսկի։*

Աննման-բաջի.—*Ապրէք, ապրէք, էգ Թիմոյ Ջրիցը մին ստական բերէք, խմեմ։*

Վարդուհի.—*(Դատարկում է Մալադի հետ խուրջինը։ Արամը քանում է երկու շիշ զելտերեան, լցնում բաժակները։*

Գալուստ.—*Բրէհատարնները մաթալ ըն (դիմում է Արամին)։*

Աւմեճակ.—*Թող սպասեն, ձիանցը քավը անցնի։*

Հայկանուշ.—*(Երգելով ջան-գիւլում, պարում է, եւ գալիս քանում Աննման-բաջու ձեռքը, որպէսզի նրան պար ածի։ Միւսները միմեանց հետ խօսում են, մատաղից ուտում, ջուր խմում)։*

Վարդուհի.—*(Մի բաժակ ջուր տալով Գիւլոն)։ Խմիր, Գիւլուզար։ Դու Թիմոյ Ջրիցը եաւ՞լ ես։ Ապա տես, Մուշ էլ այդպէս ջուր կայ։*

Գիւլուզար.—*(Խմելով). Աղուր է. ժեր Երկիր էլ կայ լաւ աղբիւրներ։ Մեր Երկիր Խզրկու անուշ ու պաղ է որ... (Արամը Թառի վրայ ածում է)։*

Հայկանուշ.—*Ռանգի, ռանգի ածի։ (Պարում է։*

Տղերքից երկուսը երեք օրիորդի հետ ջինջու վրայ ճոճում են։ Վարդուհին մի շիշ զելտեր ջրից տալիս է Մարտ-ապօր, որ քանում են Աղաջադի եւ Ակոպ-ապօր հետ խմում)։

Մարիամ-բաջի.—*Արաժ, Թանգ էլ րը տարալ, հա։*

Առամ.—*Աղի, հըւատա վէր ես մեղաւոր չըմ։ Ասըմըն Թա ողըմ չըս ժեղնհետ մի եկ։ Ամին շընարհում, ասըմըն, ընդհղի փափադն էլ կը անհն։*

Հայկանուշ.—*Մարիամ-բաջի, դու լինձանից հարցրու դրանց ալարքը, Արամը Թող Թառն ածի։*

Կանայք.—*(Պատրաստւում են պնալ, բարի պիշեր են ասում)։*

Վարդուհի.—*Հայկանուշ, դէ սկսենք, Թէ չէ պլակիինը կը գնայ։*

Հայկանուշը պարելով քոնում է Աննման-բաջու ձեռքը, մէկն էլ տալիս Գիւլոն։ Ժողովւում են աղջկերքը, հարսները, պառաւները։ Տղերքը չայ են խմում կանդնած։ Արամն ածում է։ Պառաւ կանանցից ոմանք ծաղիկներ են դնում աղջկերանց վրայ։ Ջան-գիւլում են երգում։ Իրարանցում։ Երեխաները առուտա քաղելով, մեկնում են միմեանց, պառաւներին եւ նորեկներին հարցնելով՝ սիրե-սիրե։

Վ. Ա. Բ Ա. Գ Ո Յ Ր

Jigo.

ՍՈՎԱՄԱՀ ԵՒ ԱՂԵՏԱԼԻՑ ՀԱՅ ԳԱՒԱՌՆԵՐԸ

Շուշի քաղաքի հայկական մասը (այժմ այրուած և մոխիրը պարձած, բացի եկեղեցիներէն)։

Գորիս գիւղաքաղաք. Զանգեզուրի գաւառ.



Զանգեզուրի լեռները և պղնձահանքերը.



* * *

Հոգիս փափագ, հոգիս պապակ,
Սիրաս եարոտ ու փարոտ.
Հոգիս սիրեց, սիրով լցուեց,
Սիրաս ճեաց միշտ կարօտ։

Արուն լալով, քամուն տալով
Ես ապրեցի ցաւի մէջ,
Սիրոյ կրակ, սիրոյ ճրագ
Անշէջ պահած սրտիս մէջ։

Այ փուչ աշխարհ, մշուշ աշխարհ,
Լաւ օր, եարաբ, ես տեսայ.
Սէրս կորաւ, սիրտս մեռաւ,
Իմ մուրազին չհասայ։

Յարութիւն Պետրոսեան

ՆԱՐ-ԴՈՍ

(Միքայէլ Յովհաննիսեան)

Ծնուած է 1867 թ. մարտի 1-ին Թիֆլիսում։ Դրական գործունէութիւնը սկսել է դեռ ևս գիմնազիական նստարանից՝ ուշադրաւ նամակներ թերականներին սկզբին։ Այդ ժամանակւայ նրա տպագրուած գրական առաջին աշխատութիւնն է Լերմոնտովի «Ասպազատ» ոտանաւորի թարգմանութիւնը, որը լոյս է տեսել «Արձիւրի» մէջ 1884 թ. Մ. Յ. առորագրութեամբ։ Նար-Դոսի վիպական գրուածքներից ամենաառաջինն է Ն ո ւ ն է վիպակը, որը տպուել է «Նոր-Դարում» 1886 թ.։ Այնուհետև զանազան թերականներում նոյն թերթի մէջ տպել են նրա հետևեալ ուշագրաւ վէպերն ու վէպերը. *Բարերար եւ որդեգիր, Քնքոյշ լարեր, Զազունեան, Անոնա Սարոյեան* (նորերս լոյս տեսաւ ը. տպագրութեամբ և թարգմանւած է ռուսերէն էլ), *Սեծ գործի սկզբում* (տպուած է երկու մասը միայն. երրորդ մասը մնում է անտիպ՝ այն ժամանակւայ գենզուրական պայմանների պատճառով), *Սպանուած աղաւնին, Ցանտիրոջս աղջիկը*։ Մէջ ընդ մէջ տպուած են զարձեալ նոյն թերթում նրա 10—15-ի չափ մանր պատմուածքներ, որոնց նիւթը կազմում է մեծ մասամբ ժողովրդի առնուաստորին խաւերի կեանքը։ Բացի Նոր-Դարից Նար-Դոսն աշխատակցել է Ս. Գուլամիրեանի Արարսին, Մ. Բարխուդարեանի Դրական եւ Պատմական Հանդէսին, Աղբիւրին եւ Տարազին, որի հրատարակութեամբ 1904 թ. լոյս տեսաւ և բաժանուեց բաժանորդներին իրրև պրեմիա նրա Նեղ օրերից մէկը սիրուն պատմուածքը։

Նար-Դոսը զրական լուրջ և կոնկրետ ոյժ է, լեզուին տիրապետում է կատարելապէս. վերին աստիճանի բարեխիղճ լրագրող է։ Աշխատասէր է, տոկուն և առանձնածը ամենայն ճշտութեամբ կատար ածող։ Սրա աչքից ոչինչ չէ վրիպում, դիտող է կեանքը իր բոլոր մանրիկներով։ Դժբաղդութիւնը՝ որ շատ է համեստ և հեռու ամբոխային մոպիտութիւնից...

ՄԻ ՕՐ, ԱՇՆԱՆԸ



Մի օր, աշնանը, Պետրոսը կառքով բժիշկ էր տանում հիւանդ կնոջ համար։ Նա մօտ քառասուն տարեկան մի մարդ էր՝ արդէն բոլորովին ապիտակած մազերով, գալի պէս գունատ դէմքով, խոհուն, գրեթէ լնատելիգենտ աչքերով։ Օրը կիրակի էր, աշնանային այն թախծոտ օրերից մէկը, երբ ցերեկւայ գալուկ լոյսի մէջ աւելն ինչ թեւում է ծեծւած, ճմշկւած ու տխուր։ Երկրորդ օրն էր արդէն, որ բարակ անձրև էր մաղում սրտամաշ, միալար։ Օդը յագեցած էր մինչև ոսկորները թափանցող անախորժ ցուրտ խոնաւութեամբ։ Կառքի գլուխը ծածկւած էր և այնքան ցածր էր առջևից, որ Պետրոսը ամբողջ մէջքով կռացած՝ տեսնում էր փողոցների անձևի գրեթով ծածկւած սալայատակները և մէկ էլ անցուդարձ անողների ոտները միայն։ Նա առհասարակ շատ անյարմար դրութեան մէջ էր ղղում իրեն բժշկական այդ նեղ ու ցածլիկ կառքի մէջ, որը յարմարեցրած էր մի հոդու համար, և աշխատում էր նստել այնպէս, որ իր հարևանութիւնը չխանգարէ բժշկին իր սեպհական կառքի մէջ ազատ տեղաւորւելու։

Ն Ա Ր-Դ Ո Ս (Միքայէլ Յովհաննիսեան)

Իսկ բժիշկը — չորիկ-մորիկ, ըստ երևոյթին սակաւարիւն մի երիտասարդ — վերարկուի մորթէ օձիքը մինչև ժորթէ փափախը բարձրացրած՝ պարզ ակնոցների միջով կողքից նայում էր Պետրոսի մազածածկ կիսադէմին և երկար ժամանակ նրան տանջում էր մի յամառ միտք՝ թէ որտեղ էր տեսել գալի դոյն ունեցող այդ դէմքը։

—Ես քեզ կարծես թէ մի տեղ տեսել եմ,—տասց վերջապէս բժիշկը։

—Այո, տեսել էք,—պատասխանեց Պետրոսը։—Անցեալ օր որ ինժիների հետ բարձրացել էիք այն տան պլուխը...

—Ո՞ր տան։

—Այն մեծ տան... Թաժազհանները որ շինում են...

—Հա, հա։ Ես նրանց տանու բժիշկն եմ։

- Գիտեմ։ Ես ձեզ ամեն օր տեսնում եմ նրանց տուն գալիս... Պապիրոս էիք ուզում վառել, լուցկի չունէիք. ես տվի։

—Հա, այ որտեղ եմ տեսել քեզ,—բացականչեց բժիշկը, վերջապէս յիշելով։—Դու այնտեղ բանում ես, հա։

—Այո, մշակութիւն եմ անում։

—Ի՞նչպէս թէ մշակութիւն,—զարմացաւ բժիշկը։

—Մշակութիւնն ի՞նչպէս կըլինի. հող եմ թափում, ցեխ եմ շաղախում, քար եմ կրում...

—Սպասիր։ Դու, ախր, մշակի նման չես... կարդին էլ խօսում ես...

Պետրոսը մի ծանր թառանչ քաշեց։

—Ի՞նչ արած,—ասաց նա։—Կարիքը մարդու ամեն բան անել կըտայ։ Կար ժամանակ, որ ինքս կարող էի մշակ բանեցնել, բայց հիմա... Խանութ ունէի բազարում։ Լաւ թէ վատ, փառք իմ Աստծուն, ապրում էի ինձ համար ականջս դինջ։ Կար-տուրիւն չեմ քաշել իսկի... Բայց անցեալ տարի բազարը որ աւերեցին, ուրիշների պէս իմ խանութս էլ դնաց ձեռքիցս։ Ապրանքս ծրն այրեց, ծրը թալանեցին տարան... ինձ էլ քիչ մնաց սպանէին։ Փախչելիս մի գնդակ ևկաւ դիպաւ այստեղս (Պետրոսը ցոյց տւեց աջ ոտի ազդրը), ծակեց անցկացաւ... Երկու ամիս պառկած մնացի հիւանդանոցում։ Կինս էլ այդ օրւանից սկսեց արիւն թքել և հալւում էր ոտի վրայ, մինչև որ անկողին ընկաւ... Հիւանդանոցից դուրս ևկայ և չորս ամիս ժան էի գալիս պարապ. գործ չըկար։ Ոտս էլ դեռ լմաց էր տալիս... Թէ մի բան ունէի հոգիպահուստ, այն էլ կերանք պրծանք։ Յետոյ սկսեցինք տան իրերէննները ծախծխել։ Այդ էլ պրծաւ։ Յետոյ... էհ. գիտէք, էլի... տանտէրը դուրս արաւ։ Վերջը... աղքատութիւն լաւ չէի անելու... սկսեցի մշակութիւն անել... Ինժիները, շնորհակալ եմ, լաւ մարդ է. չըմերժեց ինձ ընդունել։

—Ինչո՞ւ պէտք է մերժէր։

—Որովհետև ոտիցս դեռ էլի թոյլ եմ։ Մշակը պէտք է առողջ ոտներ ունենայ։

—Հա,—երկարացրեց բժիշկը, ըստ երևոյթին նոր մտածելով, որ այդպիսի բան կայ նղել։—Ո՞րքան ես տտանում,—հարցրեց նա կարճ լռութիւնից յետոյ։

—Եօթանասուն կոպէկ։

—Եւ դա բաւականանո՞ւմ է։

—Ո՞րտեղից... կինս քանի անկողին չէր ընկել, էլի օգնում էր ինձ. լացք էր անում, կար էր անում... բայց հիմա...

Պետրոսը նորից մի թառանչ քաշեց և լռեց։

—Զաւակներ ունե՞ս,—հարցրեց բժիշկը։

—Երեքը։ Երկուսը—մի տղայ, մի աղջիկ—սովորում են ուսումնարանում... շատ ընդունակ երեխաներ են... երրորդը երեք ամիս չըկայ՝ ծնւել է։ Նա էլ աղջիկ է։

Փողոցի ծռւացած ցեխը դէս ու դէն շպրտելով, կառքը գնաց կանգ առաւ մի խարխուլ տան ընդարձակ բակի՝ հնութիւնից մի կողմ թեքւած դռան առաջ։

Բժիշկը Պետրոսի հետ իջաւ կառքից և, սլխատեղով անցնելու յարմար տեղ գտնել, մտաւ բակը, որտեղ կաւային ցեխի մէջ երևում էին անասունների սմբակների բազմաթիւ հետքեր քրեղանների պէս՝ անձրևի ջրով լի։ Մի անկիւնում՝ անասունների աղբի, պարանի և խոտի լճացած շաղախի մէջ թաւալգլոր էին գալիս երկու վոխտ խոզ՝ կանաչաւուն ցանցառ ջրգնդերը ասեղների պէս ցցած։

Պետրոսը բժշկին առաջնորդեց բակի պարսպի տակ հաւկետև շարւած տախտակների վրայով դէպի տան ներքին յարկը, իջաւ աղիւսի ծուռտիկ-ժուռտիկ աստիճաններով պատշգամբի պէս մի բան, բաց արեց այդտեղ գտնւած դռներից մէկը և յետ քաշւեց, որ բժիշկը մտնի առաջ։

Բժիշկը մտաւ սենեակի նմանութիւն ունեցող մի նկուղ՝ աղիւսի յատակով, գաջով սւաղած խիստ խոնաւ պատերով և գերանածածկ առաստաղով։ Նկուղը լուսաւորւում էր փողոցի կողմից երկու փոքրիկ լուսամուտով, որոնք դրսից կիսով չափ գտնւում էին գետնի մէջ, իսկ ներսից կպած էին առաստաղին։ Դռան դիմացը՝ անկիւնում դրւած էր հիւանդի մահճակալը ձուլածոյ երկաթից՝ մաքուր անկողնով։ Մահճակալի առաջ՝ յատակին դրւած էր մանկան օրօրոցը, որի ծոպից լռնած օրօրում էր հիւանդը՝ ոսկրացած ձեռքը կիսով չափ վերմակի տակից հանած։ Մէջ տեղը դրւած էր հասարակ մի սեղան, որի այս ու այն կողմը իրար դէմ ու դէմ նստած էին Պետրոսի փոքրիկ տղան ու աղջիկը և գրում էին աշակերտական տետրակների վրայ։ Լուսամուտներից մէկի տակ վառւում էր թիթեղեայ մի վառարան, որի խողովակը դուրս էր տարւած լուսամուտից։ Վառարանի մէջ պինդ ճրթճրթում էին, ըստ երևոյթին, տաշեղներ. չաղ կրակի բոցը վառարանի դռնակի ծակոտիններից գիշերւայ պէս լուսաւորում էին մութ յատակը, որի վրայ լուսամուտներից լոյս չէր ընկնում դրեթէ։ Սենեակի օդը յափեցած էր խոնաւութեան, քրանքի և թիթեղի վրայ այրւած ճարպի հոտով։

—Փուհ, այս ինչ օդ է,—բացականչեց բժիշկը։—Բաց թող, բաց թող դուռը,—դիմեց նա իւր հետից մտնող Պետրոսին։

Պետրոսը դուռը բաց թողեց։ Ներսի սառուիկ տաքացած գաղջ օդը սկսեց դուրս հոսել բաղանիքի գոլորշու պէս։

Երկու երեխաները բժշկին տեսնելուն պէս վեր կացան։ Հիւանդը, որի երեսին միայն կաշին ու ոսկորներն էին մնացել, թողեց օրօրոցի ծոպը և շտկւեց անկողնում։

Բժիշկը մեկ ուզեց կրկնակօշիկները հանել դռան մօտ, բայց՝ տեսնելով, որ յատակը թաց է, չը հանեց, այլ միայն վերարկուի օձիքը յետ ծալեց, մոլթէ գլխարկը դրեց սեղանի վրայ և մօտեցաւ հիւանդին։

Պետրոսը մահճակալի առջևից վերցրեց օրօրոցը, դրեց հետու, աղջկան գլխով արաւ, որ գնայ օրօրի, իսկ ինքը հետու-ժամիկ կանգնեց մահճակալի մօտ։

—Նստիր տեսնենք,—դիմեց բժիշկը հիւանդին։

Հիւանդը, տաքութիւնից այրւող իւր ահագին աչքերով մի վախկոտ հայեացք ձգեց բաց դռան կողմը։

—Չես մրսիլ, մի վախենալ,—ասաց բժիշկը։

Հիւանդը զօր տալով իւր կմաղքացած բազուկներին, նստեց։ Նա շնչում էր ծանր և հաւու, երկար տեղ վազած մարդու նման։

Բժիշկն սկսեց ուշի-ուշով քննել նրա կուրծքը, կողերը, թիկունքները։ Այդ միջոցին ինչ-որ տարօրինակ խուլ դղրդղոց, որ լսւում էր հաստ պատի ետևից չափաբերական շեշտերով, զրաւեց նրա ուշադրութիւնը։

—Այս ինչ ձայներ են,—հարցրեց նա, ականջը հետացնելով հիւանդի թիկունքից։

ԱՍՏՒԱԾԱՄԱՅՐՆ ՈՒ ԱՍՏՒԱԾԱՅԻՆ ՄԱՆՈՒԿԸ

—Ջիաներ են,—շտապեց պատասխանել Պետրոսը։—Մեր կողքին գոմ է։

—Հա... Ուրիշն անասուններն էք եղել, —ասաց բժիշկը, ծիծաղեց և ականջը նորից դրեց հիւանդի թիկունքին։—Շունչ քաշիր... Խորը...Էլի...Էլի... Խորը շունչ քաշիր...Այդպէս...Էլի... Հիմա ասա՝ մէկ, երկու, երեք. մէկ, երկու, երեք...

Հիւանդը, իւր ջերմոտ մէջքի մերթ այս, մերթ այն թիկունքին զգալով բժշկի սառն ականջի հպումը առանց այն էլ խոշորացած աչքերը բացել էր լայն, շնչում էր կարելոյն չափ խոր, սաստիկ յոգնած մարդու նման արտասանում էր իրար հետևից «մէկ, երկու, երեք... մէկ, երկու, երեք...» և բոլոր ժամանակ ժպտում էր, ըստ երևոյթին զարճանալով իւր կատարած այդ տարօրինակ գործողութեան վրայ։

Օրօրոցն օրօրող փոքրիկ աղջիկը, նայելով մօրը, յանկարծ փոսկայրեց և ազատ ձեռքի ափով սկսդ ծածկեց բերանը։

Հայրն աչքունքով սաստեց նրան։

—Դէ հիմա պառկիր,—ասաց բժիշկը, ինքն իւր ձեռքով ծածկեց հիւանդի կուրծքը, դնաց նստեց սեղանի մօտ և թուղթ պահանջեց։

Փոքրիկ տղան իւր տեսրակից պատռեց մի թերթ, դրեց բժշկի առաջ և այն միջոցին, երբ բժիշկը դրում էր դեղատոմսը, իւր խելացի աչքերով նայում էր նրա ձեռքի դրչին և երկու ձեռքով մեքենայաբար հանն էր հաւաքում բլուզի ծալքերը։

Դեղատոմսը դրելուց յետոյ, բժիշկն ասաց, թէ ինչպէս պէտք է դործածդրել տեղերը, մի քանի խորհուրդներ տուեց հիւանդի պահպանութեան վերաբերմամբ, դնահատկը ծածկեց և, երբ դուրս էր գնում, ձեռքի մէջ դրաց Պետրոսի ձեռքի շօշափուկը։

—Հարկաւոր չէ,—ասաց նա, ձեռքը յետ քաշելով, և արագօրէն դուրս գնաց.—Հիմա կարող էք դուռը փակել,—կանչեց նա դրսից.—աշխատեցէք օդը շուտ-շուտ մաքրել։

Պետրոսը ձեռքի դրամը նորից գրպանը դցեց և դուրը յետ արաւ ծանր ու մտախոհ... Իւր դժբաղդութեան օրերում թերևս առաջին անդամ նրա հպարտ հոդին նւաստացած էր դգում իրեն բժշկի ցոյց տւած բարութիւնից...

Նար-Դոս

ԾՆՆԴԵԱՆ ԱԻԱՆԴՈՒԹԻՒՆ

(Ֆրանսիի Լնփօքի)

ւասաց հրեշտակը հովիւներին, որոնք գիշերն անց էին կացնում գաշտում պահպանելով իրանց հօտերը. «Մի վախեցէք, ես աւետում եմ ձեզ մեծ ուրախութիւն. Դաւթի քաղաքում այժմ ծնուեց Քրիստոս—Փրկիչը։ Դուք կը ճանաչէք նրան, գտնելով մի Մանուկ, փաթաթուած խանձարուրով և դրուած մսուրքի մէջ»։

Դրանից յետոյ հրեշտակը թռաւ և երկնքում լսուեց այս երգերը. «Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն», իսկ հովիւներն ասում էին միմեանց. «Գնանք Բեթղեհէմ, տեսնենք թէ ինչ է պատահել այնտեղ»։ Եւ նրանք շտապով ճանապարհ ընկան։

Երեք փոքրիկ աղջիկերը,—Աննան, Մագթաղը և Մարթան,—որոնց քնած էին համարում վրանում, տեսան ու լսեցին ամեն ինչ։ Նրանք խիստ վախեցան այն վայրկից, որով շրջապատուած էր հրեշտակը, բայց քանի որ նրանք խիստ հետաքրքիր էին, ուստի սաստիկ ցանկանում էին տեսնել Մանկանը մսուրքում։

Կամաց դուրս սողալով վրանից և խօսելով միմեանց հետ, նրանք երեքով ճանապարհ ընկան այն ուղղութեամբ, որ ցոյց էր տւել հրեշտակը։

Աննան—նրանցից ամենափորձուածը, — վերցրեց մի լուռ չոր արմաւ, թէև Յուդայի երկիրն այդ ժամանակ հռչակուած էր իր բնակիչների բարութեամբ և ճանապարհորդները հիւրասիրութեան կողմից երբէք մերժում չէին ստանում։

Ստոն քամին փչում էր ուղիղ նրանց երեսին։ Երեք աղջկերքը ձեռք ձեռքի տուած, համաչափ առաջ էին գնում։ Նրանք վիրաւորում էին իրանց ոտքերը քարերին տալով, սայթաքում էին գիշերային մթութեան մէջ և խիստ վախենում էին բոլոր սև առարկաներից։ Օ՜, ինչպէս սառել էին նրանք և յոգնել։

Սակայն Տէրը կարդալով նրանց սրտում եղածը, քաջալերիչն էր ներշնչում նրանց, ուղղում էր նրանց քայլերը և հսկում նրանց վրայ։

Նրանք, վերջապէս, մտան մի այր և մօտեցան քնած Յիսուսին։

Թարմ յարդի վրայ մոզերի թողած թանգակին ընծաների տեսքը խիստ զարմացրեց նրանց։ Այդտեղ կային ոսկի, կնդրուկ և զմուռս, նոյնպէս և հովիւների բերածները, որոնք էին ոչխարի բուրդ, կարագ և թանձր կաթ։

Եղեռ աղջկերքը տխուր նայում էին իրանց դատարկ ձեռքերին։ Նրանք ոչինչ չունէին, բոլորովին ոչինչ։

Միևնոյն ժամանակ Յիսուս Քրիստոսը գարթնեց և բացեց իր գեղեցիկ մուգ-կապտագոյն աչքերը։

Այդ ժամանակ Աննան ժպտաց իր հրաշալի հեղհամբոյր ժպտով, իսկ Մագթաղը, որն աւելի համարձակ էր, մօտեցաւ և մի համբոյր դրօշմեց Աստուածային Մանկան երեսին։

Ամաչկոտ Մարթան չը համարձակուեց հետևել նրա օրինակին, նա զգաց, որ իր աչքերը թրջուում են և ցած խոնարհեց իր երկար արտևանունքները։ Աստուածքի երկու թափանցիկ կաթիլներ գլորուեցին նրա երեսով և ընկան Յիսուս Քրիստոսի ոտքերին։

Աստուածային Մանուկն ընդունեց ժպիտը, համբոյրը և արտասուքը, և մեկնելով ձեռքերը, ձգեց աշխարհի մէջ, մարդկանց ուրախութեան համար, ժպտի փոխարէն յոյս, համբոյրի փոխարէն հաւատ և արտասուքի փոխարէն դթասրտութիւն։

Լ. Մարկոսեան

ՌՕԲԵՐՏ ՇՈՒՄԱՆ

(Նրա մահուան յիսնամեակին)

—

Շերմանացի կոմպոզիտորը ծնուել է 1810 թուին և վախճանուել 1856-ին։ Թէպէտ նա խիստ ցանկացնում էր նուիրուել երաժշտութեան, սակայն իր հօր մահից յետոյ, ըստ ցանկութեան իր մօր, 1828 թուին մտաւ Լայպցիգի համալսարանը իրաւաբանական գիտութիւններ սովորելու. 1829-ին նա անցաւ Հայդելբերգի համալսարանը, սակայն երկու տեղումն էլ նա պարապում էր առաւելապէս երաժշտութեամբ, այնպէս որ, վերջապէս, 1850 թուին նրա մայրը համաձայնեց, որ որդին դառնար պաշնակահար. Ֆր. Վիկի ձեռքի տակ, բայց շուտով աջ ձեռքի մատներից մէկի թուլանալու պատճառով ստիպուեց հրաժարուել այդ ասպարէզից և նա նուիրուելով բացառապէս կոմպոզիտորական գործունէութեան, բակսեց սովորել այդ արուեստը Դօրնի դեկավարութեամբ։ Դրա հետևեալ տարիները Շումանը գրեց մի քանի մեծ պիեսներ դաշնամուրի համար և հրապարակ եկաւ ինչպէս գրող երաժշտութեան մասին։ 1834 թուին նա հիմնեց «Neue Zeit chrift für Musik» թերթը, որը խմբագրեց մինչև 1844 թ։ Նա իր յօդուածներում մի կողմից մարտնում էր կեղծ երաժշտապիտութիւնը, միւս կողմից սիրտ տալիս բարձր ձգտումներ ունեցող երիտասարդ երաժշտահետներին։ 1840 թուին Շումանն ամուսնացաւ իր նախկին ուսուցիչ Վիկի աղջկայ—Կլարայի վրայ և միևնոյն ժամանակ էլ նրա գործունէութեան մէջ առաջ եկաւ յեղաշրջում, քանի որ նա, որ առաջ պրում էր միմիայն դաշնամուրի համար, սկսեց գրել և երգելու համար, նոյնպէս և սկսեց պարապել գործիքաւոր կոմպոզիցիայով։ Երբ հիմնուեց 1843 թ. Լայպցիգի կոնսերուատորիան, Շումանը գրաւեց նրա պրոֆեսորը։ Նոյն տարին էլ աւարտեց նրա հեղինակութիւնը «Դրախտ եւ Պերի», որը տարածեց նրա հռչակը։ 1844 թուին նա իր կնոջ հետ, որը նշանաւոր դաշնակահար էր, կատարեց մի արտիստիական ճանապարհորդութիւն, որով երկուսն էլ մեծ հռչակ ստացան։ Լէյպցիգ վերադառնալով նա թողեց լրագրի հրատարակութիւնը և կնոջ հետ տեղափոխուեց Դրեզդէն, ուր 1847-ին իր վրայ առաւ Liederafel-ի և խմբական երգեցողութեան ընկերութեան կառավարութիւնը։ 1850 ին Լայպցիգում գնելով իր Genoveva օպերը, նա ընտանիքով անցաւ Դիւսսելդօրֆ, ուր ստացաւ երաժշտութեան տեսչի պաշտօն։ Սակայն ուղեղի քրօնիքական հիւանդութիւնը, որի առաջին նշաններն արդէն երևացել էին 1833 ին, սկսեց այնպէս արագ առաջանալ, որ նա արդէն 1853 թուին ստիպուած եղաւ թողնել պաշտօնը։ Հոլլանդիայում իր կնոջ հետ մեծ յաջողութեամբ կատարած արտիստիական ճանապարհորդութիւնը նրա կեանքի վերջին ուրախալի դէպքն էր։ Խիստ պարապմունքներից նրա հիւանդութիւնն սկսեց պարպանալ և 1854 թուին նա ձգեց իրան Հռհնոս գետը։ Նրան ազատեցին, սակայն նրա խելքն ընդմիշտ կորել էր։ Դրանից յետոյ նա երկու տարի ևս ապրեց հոգեկան հիւանդների հիւանդանոցում, Բօննի մօտ։



Մենդելսոնի հետ մի շարքում Շումանը կարող է համարուել րոմանտիք ուղղութեան ներկայացուցիչներից մէկը, այն ուղղութեան, որ ընդունել էր վերմանական երաժշտութիւնը 1830-ական թուերին։ Մենդելսոնի նման նա էլ չը հասաւ իսկական լեհական յաջողութեան, թէև նրա Genoveva օպերն այժմ էլ սիրուած է ընտիր հասարակութիւնից։ Նրա մեծ խմբական համերգները ներկայացնում են բարձր երաժշտական կատարելութեան նմուշներ։ Նրա ընտիր հեղինակութիւնների մէջ երևակայութիւնն ու զգայողութիւնը արտայայտում են զարմանալի ուժով, այնպէս որ այդ հեղինակութիւնները կարող են համարուել վերմանական երաժշտութեան ամենահմայիչ մարգարիտներից։

ԹԱՐՄ ԾԻՐԻՄՆԵՐ

ՆԱՀԱՊԵՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԱՀԱՊԵՏԵԱՆ

Նահապետ եպիսկոպոս ՆԱՀԱՊԵՏԵԱՆ

Անցեալ տարի, հոկտեմբերի 1-ին, Նոր-Նախիջեւանում անակնկալ կերպով իր մահկանացուն կնքեց հայ եկեղեցու ամենաարժանաւոր սպասաւորներից մէկը, Նահապետ եպիսկոպոսը՝ մօտ 60 տարեկան հասակում։

Ով ծանօթ է Կովկասի հայոց վերածնութեան վերջին երեսնամեայ շրջանում տեղի ունեցած հանդամանքներին, անշուշտ կըյիշէ Արշակ Նահապետեանի անունը։

Արդէն 70-ական թուականներին Արշակ Նահապետեանը համալսարանական դասընթացն աւարտելով իրրև ընագէտ, նուիրուում է հայ ուսուցչական և հասարակական ասպարէզին։ Իր վարչական ընդունակութիւնների և բնաւորութեան համակրելի գծերով երիտասարդ գործիչը հայ հասարակութեան ուշադրութիւնն իր վրայ հրաւիրելով կարճ ժամանակի ընթացքում ստանձնում է հայ ժողովրդի ունեցած ամենաբարձր դպրոցական հաստատութիւնների — Ներսիսեան դպրոցի, Գէորգեան ճեմարանի—դիակը և մեծ հմտութեամբ ու խելացի տակտով առաջ է մղում մատաղ սերնդի դաստիարակութեան նուիրական գործը։

ԱՐԻՍՏԱԿԷՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵԴՐԱԿՆԵԱՆ

Նահապետեանն իրրև դպրոցական գործիչ, շատերի նման, միայն ձեւական տեսակէտից չէր վարում իր ստանձնած պաշտօնները, այլ հոգով-սրտով նուիրուում էր գործին, ոչ մի աշխատանք չէր խնայում և օր ու գիշեր եռանդով ու ջանասիրութեամբ տքնում էր յօգուտ իր սիրած գործի։

Այնուհետև, երբ վրայ հասան պետական ճնշումներն ու հայ ժողովրդի իրաւազրկութեան շրջանները, Նահապետեանը դասալիք չեղաւ, չընկոչից իր տարիներով վայփայած ասպարէզը, այլ ընդհակառակն աւելի ոգևորելով՝ իրեն զրկեց աշխարհային կեանքի վայելչութիւններից և հազաւ հայ հոգևորականի անշնորհակալ սքեմը, որպէս զի աւելի ազատ ասպարէզ ունենայ իր զաղափարներն իրագործելու յօգուտ հայ ժողովրդի և եկեղեցու։

Նահապետ վարդապետ դործում էր ոչ պակաս աշխոյժով և հաստատամտութեամբ, քան Արշակ Նահապետեանը. իր բարոյական իդէաներով, հաստատուն սկզբունքներով և անձնուիրութեամբ նա օրինակելի դարձաւ իր աշակերտ-հետեւողների համար և մեծ հեղինակութիւն էր վայելում։

Նահապետ վարդապետի նման հմուտ, իրազեկ և խելացի անցը հարկաւ ազդեցութիւն պէտք է ունենար էջմիածնի գործերի վրայ, նա ամեն կերպ աշխատում էր արտաքին և ներքին տանձգութիւնների առաջն առնել և միշտ բարձր էր ուզում պահել հայ ժողովրդի և եկեղեցու ազգային-քաղաքակրթական ինքնուրոյնութեան դրօշը, այս էր երևի պատճառը, որ հայակերութեան քաղաքականութիւնը Նահապետ վարդապետին քշեց իր սիրած ասպարէզներից։ Ամբողջ 7 տարի Նահապետն անգործունէութեան դատապարտուեց Ղրիմի սբ. Խաչ վանքում, մինչև որ վերջապէս ծագեց Ռուսաստանի արշալոյսը։

Նահապետը վերադարձաւ, եպիսկոպոս ձեռնադրուեց, նշանակուեց սինոդի անդամ ու մինչ հայ հասարակութիւնը յոյս ունէր, իր հին, համուտ առաջնորդի աւելի ևս փորձուած ուժերից օգտուելու՝ անակնկալ հարուածը վերջ տուեց դեռ ևս գործելու ե-

ՍԱՐԳԻՍ ՊԱՂՆԵԱՆ

ռանդ ու կարողութիւն ունեցող գործչի բազմարդիւն կեանքին։

Ալամդարեանի, Մ. Նալբանդեանի, Ռ. Պատկանեանի շիրմների կողքին մի անմոռանալի հոգեկոյտ ևս աւելացաւ...։

Յ. Ի.

ԳԷՈՐԳ ՊԵՏՐՈՍԵԱՆ

ԱՐԻՍՏԱԿԷՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵԴՐԱԿԵԱՆ

—

Մի արկանէք զարբուրիւն...
Աւետարան.

Ա՛ր ժամանակ, երբ մի արքեպիսկոպոս, իր պատկառելի հասակում թըքոտոզ է լինում, և ոչ ոք դրա համար չի խղճահարւում, և մինչև անգամ լսում էլ ես չորս կողմից, թէ՝ «հազիւ հայ ժողովուրդը ժառանգութիւն ունեցաւ ծուռ արծակել կեղծիքի վրա», էլ ինչ ասես այնուհետև մի այլ անձի մասին, որ նոյնպէս արքեպիսկոպոս է: Կան ասողներ, թէ այլ է Սուքիաս և այլ՝ Արիստակէս: Բայց կան ասողներ էլ, թէ՝ Ամենափառաւորը երկուսից լաւագոյնն է: Որովհետև մի հոգևոր անձն և այն՝ բարձրաստիճան, որքան խելօք լինի և ժրաջան, որքան յարգելի և սիրելի լինի ժողովրդին, այնքան շատ մարդ կը մոլորեցնէ կրօնական նախապաշարմունքով և կղերական զաղափարով:

Այսպէս ահա՝ մենք ապրում ենք այնպիսի մի ժամանակ, երբ մեր նախկին աշխարհայեացքը ներկայանում է մեզ դրսեւորւած և գլխիվայր դրւած: Երեկւա լաւն ու օգտակարը այսօր դառել է վատ ու վնասակար: Եթէ մի մտաւորական ասէ, թէ այս ցուրտն աղատ է ինքը, նա իր խղճի դէմ մեղանչած կը լինի:

Քանի որ ժամանակիս մտաւորականների և նոր սերնդի տրամադրութիւնն այսպէս է լարւած, լաւ կը լինի, որ մեր սրբութիւնները հրապարակ չբերանենք: Սպասենք Արիստակէսի մասին խօսելու բարեպատեհ ժամանակին, իսկ մինչև այդ օրը նրա պատիւը բարձր պահենք ու նրա անմահ յիշատակը մեր սրտերում անմոռաց:

Գ. Ադայեանց

ԳԷՈՐԳ ՊԵՏՐՈՍԵԱՆ

Ճանաչում էի տարաբաղդ Գ. Պետրոսեանին նրա պատանեկական հասակից: Գիմնազիայի աշակերտ էր դեռ նա, երբ առաջին անգամ լսեմ դուրս եկաւ Մուրացանի Ռուզան ողբերգութեան մէջ Մարտա ձերունու դերում և հէնց այդ օրից ամենքիս ուշադրութիւնը գրաւեց Գ. Պետրոսեան իր մտածած դերակատարութեամբ:

Գ. Ա. ՕՊՕՉԻՆԻՆ

Ասատպելանման թատրոնական 1879 թ. կոմիտէն հմայեց Պետրոսեանին և ընդմիշտ հայ թատրոնի դիրկը նետեց նրան: Կոմիտէն ճանաչեց Պետրոսեանի սէրն ու տաղանդը և կաշկանդեց ու պահեց նրան թատրոնի հետ: Զքաղաւ առասպելական փարթամ կոմիտէն, սակայն Պետրոսեան հաւատարիմ մնաց իր դրօշակին և շատ անգամ խթան կոմիտէներ կազմելուն:

Համարեա միաժամանակ Պետրոսեանի հետ երևան եկաւ և Աբելեան:

Պետրոսեան խոհեմ և աշխատասէր դերասան էր, նա ուսումնասիրում էր անդադրում կլասիկ և նորադոյն բնպերտուար ու հանդէս գալիս իր մտածւած խաղում: Օտելլոյի դերը նա հիմնովին ուսումնասիրել էր և կատարում էր մեծ արտիստներին յատուկ տաղանդով:

Պետրոսեան անհրաժեշտ ոյժ էր հայ բեմի համար և հազիւ թէ շուտով այդ ղդալի մեր կորուստը վոխարինենք:

Յաւերժ յիշատակ հայ թատրոնի բեղմնաւոր մշակին:

Գ. Զոհրապ

Գ. Ա. ՕՊՕՉԻՆԻՆ

ԳԷՈՐԳ ՊԵՏՐՈՍԵԱՆ
(«Պատիւ» պիեսի մէջ).

ՄԿՐՏԻՉ ՊԱՂԵԱՆ

Վարժապետութեան յիսուն տարւայ տաժանելի աշխատանքից խոնջ, խոնարհեց գլուխը Մկրտիչ Պաղեան, յայտնի հայկաբան, հին սերնդի վերջին և պատկառելի ներկայացուցիչներից մինը: Վենետիկի սաներից էր նա, մինը մեր կեղծ-կլասիկ դրաչդանի դաւանիներից, որ դասի ժամանակ, ժանաւանդ ուրախութեան և խնջոյքի մէջ ճառել և քաղցրացնել դիտէը սեղանը խարենացու և Նիշէի ասկեղն լեզուով, որոնց մանապէս և վերին աստիճանի հմուտ մեկնիչ էր հանդուցեալը:

Ծնունդով Տրապիզոնցի էր, ուր և կրթւում էր վենետիկեան աւարտելուց յետոյ, որպէս ուսուցիչ-հայկաբան:

Այնտեղից նա հրաւիրւեց Թէոդոսեան Խալիպեան դպրոցը, ապա անցաւ Ներսիսեան դպրոցը, այնուհետև դասախօսեց ճեմարանում և ի վերջոյ Երևանի հոգևոր դպրոցում, ուր և կատարեց հանդուցեալի 50-ամեայ կրթական-մանկավարժական գործունէութեան յոբելեանը 1903-ին: Նա ինքնից իր մահկանացուն ամսիս 13-ին Երևանում, իբրև 73 ամեայ ժիր ծերունի, որ մի հազուագիւտ հասակ է ուսուցչենրի կեանքում: Թաղումը տեղի ունեցաւ Երևանում մեծ շքով:

Պ. Պ.

Գ. Ա. ՕՊՈՉԻՆԻՆ

Կովկասում շատ յայտնի լանսատեղծ, լրագրող, դրամատուրգ, երգիծաբան, փառաբան, դերասան, խմբագիր և հասարակական գործիչ Պետար Ալեքսանդրովիչ Օպոչինինն էլ ուսանդ գնաց սև հողին։ Կարճատև հիւանդութիւնից յետոյ վախճանուեց Թիֆլիսում յունուարի 25-ին և թաղուեց Վէրայի ս. Յովհաննու Ոսկեբերանու եկեղեցու բակում մեծ շուքով։

Տասնիններորդ դարու վերջին քառորդը, ռուսական պատերազմից յետոյ հորիզոնի վրայ երեւացող արշալոյսին սա էլ էր դուրս եկել իր օվսաննան ասելու։ Մեծ էր այն ժամանակ ոգևորութիւնը, մեծ և անարատ էր ժանաւանդ այն ժամանակ հաւատը։ Հայրենիքի իսկական բարօրութիւնը այն ժամանակ չէին գտնում ոչ ուղղ ժամեայ աշխատութեան մէջ և ոչ գործադուլների։ Ամէնքն էլ պատրաստ էին անդադրում գիշեր և ցերեկ աշխատելու, միայն թէ արշալոյսը բերէր գլարթ առաւօտ, կարմիր արևը ծագէր, ջերմացնէր ու հասունացնէր հայրենի խոպան երկրում ցանուղ սերմերը։

Գարնանային արշալոյսի նման կայտառ, ժպիտը միշտ երեսին, սև քարը կրծքին սեղմած իւրաքանչիւրն իր այժերից ասելի վեր ակօսում էր մայր երկիրը։ Եւ Օպոչինին իր պերճ լեզուով ու գրչով խարտեաշում էր ժամանակակից հասարակական ախտաւորին իր «Фаланга» և «Гусли» սատիրական թերթերի մէջ։ Горе-смѣховъ-ի ֆելետոնները, որ նա գրում էր այդ ծածկանուն տակ կարդացուում էին մինչև այսօր էլ մեծ յափշտակութեամբ։

Օպոչինինն իսկական կովկասեցի էր, նա այնքան էր ռուս, որքան և հայ ու վրացի էր ու պուչկ մուսուլման։ Մանաւանդ, որ սա հազարաւոր քրէական յանցաւոր մուսուլմանների իր կեանքում պաշտպանել է դատաստանի առաջ, վերադարձել նրանց կեանքը, ազատել տասնամեայ աշխատանքից,— սրանց յանցանքը բացատրելով խաւարն ու տգիտութիւնը։



ՍԵԻԱՆԱՅ Վ. Ա. ՆՐՔԸ

XIX դարու վերջին քառորդում և տասը մինչև օրս, հասարակական, դրական արուեստի վերաբերեալ մի գործ չը կայ կատարուած, որի մէջ Պ. Ա. Օպոչինին ամենաչնչին մասնակցութիւն ունեցած չը լինի։

Իննսունական թուականների սկզբին աշխատակցել է և մեր «Анонсъ» լրագրին ու սրա մէջ է տպագրուած նրա «Автоматъ» օպերետը։

Վերջին երկու տարիներս Օպոչինին խմբագրում էր և պաշտօնական «Кавказъ» լրագիրը, սակայն գան ու գայլը, ջուրն ու կրակը անկարող լինելով միմեանց հետ հաշտեցնելու, ընկնում էր հակասութիւնների մէջ։

Բադամէա

ԱՆՕԽՕՋ

Ես գնում էի միայնակ ու լուռ՝
Սև շիրիմների կոյտերի միջով,
Եւ մեռելային անեղ խաւարում
Ինձ միմիայն մէկը խօլական ձայնով։

Ինչու միայնակ, թախիծը պնդիր՝
Շրջում անխօս գամբարանների՝
Սև վըշտի կըռնիք քո ըսպ ճակատին,
Եւ արիւնոտ վէրքն քո մատաղ կըրծքում։

Ամբողջ մեր կեանքը արիւն ու արցունք։
Մեր չորս բոլորը արիւն է հոսում։
Եւ շիրիմների պատռատածքներից՝
Տես, արցունքի տեղ արիւն է ժայթքում։

Փախիր, չուտ անցիր այդ արեան վայրից,
Ուր ժանդ խաւարն է միշտ թագաւորում.
Եւ ահեղազոյն փոթորիկներին
Դալար ասօրիներ՝ սըզոյ երգ հիւսում։

ՄՈՒՇՂԻՐ ԴՂԴԻՆ
Նորերս հանգուցեալ Շանը

Թէև ահռ, սըլացիր դէպի պարզ երեք,
Ուր փայլուն աստղերն են միշտ պըլպըլում.
Եւ թռչուններըը անուշ դայլայլով
Մեր սև օրերի խոր վիշտն են երգում։

Սիլսաճի

ՍԵԻԱՆԱՅ ԼՃԻ Ա.ՓԻՆ

(Իմ յուշատետրից)

Յուլիս ամսուայ տաք գիշերը իր գրկի մէջ էր առել խաղաղ ծովակը։ Հորիզոնից բարձրացել էին ամպի խոշոր քուլաները և ջրջապատել գունատ լուսնին, որ երկնքի բարձրութիւնից նայում էր ցած և իր դէմքը անդրադարձնում ջրի մէջ։ Զգայւում էր, որ մի երկու ժամից յետոյ խաւարելու է ամբողջ երկրագամարը, որտեղից թափւելու են անձրևի խոշոր կաթիլները։ Հեռաւորութեան մէջ նշմարւում են միակերպ, ցամաք լեռների երկայն շարքերը, բայց կզգին իր հինաւուրց վանքերով մի կողմ էր մնացել, նա չի երեւում։

Ափին խաղաղութիւն է տիրում։ Գիւղական անշուք տնակները, ալիառների կոյտերի հետ միախառնւած, իրանց անորոշ ձևերով սիրւելիս են կազմել լուսաւորւած ջրի մակերևոյթի վրայ։ Աւելի մօտիկ, ճանապարհից ոչ հեռու երեւում է մի խզճուկ պանդոկ, որի լուսամուտից միակ ճրագը իր կարմրաւուն լոյսը ճառագայթում է դուրս։

Տեսարանը գրաւիչ է։ Լուսինը ամպերի հետ համբուրւում են։ Նրանք իրանց շուրջը կազմել են բոլորաձև գեղեցիկ ծիածան, որը մի քանի րոպէից յետոյ ծածկւելու է խաւարի մէջ։

Որքան դժւար է ինձ համար բառերով արտայայտել բնութեան գեղեցկութիւնը և որչափ կըցանկայի պատկերացնել կտաւի վրայ վրձինի միջոցով այս վայրկեանը *)։

Գ. Բաշինջաղեան

---

*) Տաղանդաւոր նկարիչն իր ցանկութիւնը վայրկ կերպով կատարել է և իր այդ ստեղծագործութիւնն է, որ յատկացրել է Պետրոսեանի որբերին և վճակ է դնում։ Խմբ.

ԼԷՕՆԻԴ ԿՆԻՆԱՆ.

Պէս զարէ ու երաժշտական աշխարհում անդադրում սերմանում և տարածւում է սիրունդնում մի մարդ, որ ամենափիւնում մի մարդ, որ ամենափիւնից բացառապէս նուիրուել է այդ աշխարհին։

Այդ մարդը Լէոնիդ Կնինան է, որ իր բեղմնաւոր գործունէութեան կէսը՝ գաղթած զար Թիֆլիսում է կատարել։ Սա ծնուել է Բոռնէմիայում և 1847 թուականից՝ մանուկ հասակից մինչև օրս՝ վաստն ձիլ տարիներ չօչինում է նուագներ և ուսուցանում երաժշտութիւն (պաշտակ.)։

Մի խումբ համակրողների նախաձեռնութեամբ այս վերջերս նախապատրաստութիւններ են տեսնում ասելու ազգարդ երաժշտական—մանկավարժի չօրեկեանը։ Ղեկավարի չօրեկեանը։ Ղեկավարելով նախաձեռնողների այդ որոշումը, ԳԵՂԱՓՆՉԻՆ հետևել համարում կը ստանք չօրեկեանի պատկերի հետ և նրա կենսագրութիւնը։ Լէօնիդ Կնինան քանիցս ասելի հայ ժողովրդական երգեր ներդաշնակել է և վերածել նոտաների, որ լոյս են տեսել պ. Գոդոս Կարա-Մուրզայի հրատարակութեամբ։ Սա է Թիֆլիսում 1870 թ. հիմնել առաջին մասնաւոր երաժշտական դպրոցը, որտեղից ասարտել են աչքի ընկնող շատ գաշնակահարներ։ Ունի 220-ից ասելի տպագրած հնդկութիւններ, ասել է գաստեր և կոնցերտներ թէ նուագատնտեսի և թէ սրատատնմանում։

—

Ըստ էս պէտ գժգոհութեան տեղիք չէ տինք ուած «Գեղափնջիկի» յարգելի ընթերցողներին, քնդրում ենք, այս մասին յայտարարել, թէ նրանք, որոնք չեն ուզում Մուծակի երկրորդ տպագրածներից զրկուել, գոնէ մի օրինակ ձեռք բերելու համար, թող շտապեն անյապաղ ուղարկել Թիֆլիս Մամուլի Բիւրօի հասցէին տարկանեղով 15 կոպ. 100 օր. պահանջողին Գեղափնջիկի պ. խմբագիրը իրաւունք ունի ընդհանուր գնում երեք րուբլի զիջում անելու։

Որովհետև քնդիրը զուտ ազգային բնաւորութիւն է կրում, ուստի քնդրում ենք միւս ազգային թերթերին սոյն նամակը զրի արտատպել իրենց հրատարակութիւններում։

Ամենայն յարգանք

«Մուծակի» օգտին խմբագրութիւն։

—

ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

Արաքսեան պ. Միրզոյեանի հետ Ղ. Աղայեանի Աւետնազարը օպերէտի, թէ պիէսի է վերածել և օրերս ներկայացնելու են։ Նարդոսը իր Սպանուած աղաւնին վէպիկը զարձել է պիէս նշանաւոր և շատ ազդ փոփոխութիւններով։

—

Տ. Եաւորեանն վերցրել է Զատկից սկսած մի ամբողջ տարով Արտասրիկ. ընկ. թատրոնը։ Շնորհալի տրտիատուհին և դրամատրգ իշխան Բարեատիկի հնարատրութիւն կունենան անշուշտ զարկ և ուղղութիւն տալու և մեր դրամատիկական խմբերին։

—

Եղեռնական ժամով վտարեամում երջուհի օր. Յուսիկ Պապայեանի մահուան տարեդարձը, յունուարի 20-ին, Թիֆլիսում ոչ ոք չը յիշատակից։

ՉԱՐԱԿԱՆ կօնցերտ
ՏՐՈՕ. հեր. ԵՂԻՇԵՒ Գ-ւոր միմեանց հաւասարական, բայց և բոլոր տարբեր կատարողների մասնակցութեամբ։

Т-во парфюмерной фабрики
ПРОВИЗОРЪ
А. М. ОСТРОУМОВА
КРЕМЪ
МЕТАМОРФОЗА
ОТЪ ВЕСНУШЕКЪ.
GRAND-PRIX
ВЫСШАЯ НАГРАДА БРЮССЕЛЬ 1905 Г.

Ընկերութիւն հոտաւէտ զործարանի
ա ր օ մ ի զ օ ր
Ն. Մ. ՕՍՏՐՈՒՄՕՎԻ
ԿՐԷՄ
ՄԷՏԱՄՕՐՖՕԶԱ
երեսի պէպէնների դէմ.
GRAHD-PRIX
Բարձր պարգև Բրիւսել 1905 թ. (10—2)

ԵՐԱԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ՍԱՊՈՆ
ԽՈՅԼԻ ԴԷՄ
կտորի գինը 25 և 35 կոպ.
Ծախվում է ամենայն տեղ։
Т-во Парфюм. фабрики провизора
А. М. ОСТРОУМОВА
МОСКВА.

Մեր թղթակիցները

Յարգելի խմբագիր

Բագու, յունուար 907.

Ձեզ լաւ յայտնի է, որ Բիւրեղիզոր 25 տարի առաջ Դործի առաջին համարից է սկսել գգել, որ Ներկայացուցիչների հանդէս գալու օրից է սկսել ներկելը, իսկ Մուծակը առաջին անգամ իւր տպագրոցը սկսել է Տարագից։

Հանգամանքը այժմ այնպէս է պահանջում, որ այսուհետև Մուծակը Բագուում պէտք տպագրուի։ Սակայն Մուծակը հնարաւոր Տարագին, իւր երախտագիտական պարտքը կատարելու և իւր բարեկամական կապերը պահպանելու համար, սրանով պատիւ ունի յայտնելու, որ այսուհետև փոխանակ Մուծակի երկուսի, հանդէս պիտի գայ իւր փոքրիկ քոյրիկով, նրա որդին՝ Մժուկը, որը, ամենայն սիրով ընդունելով հօր առաջարկը, ուրախութեամբ ցանկութիւն և յօժարութիւն յայտնեց մէկ-մէկ Գեղափնջիկ-ում այն պէս «պօկրիկ-պակրիկ» քայլելու։

Որովհետև ամսոյս 15 ից տպագրած Մուծակի 50 հազար օրինակները Բագուում մի օրուայ մէջ սպառուեց և միւս քաղաքների և տեղերի համար բաժին չը մնաց, ուստի ձեռնարկուած է երկրորդ տպագրութիւնը մինչեան 100 հազար օրինակ։

№ 1 XXV ՅՈՒՆԻՍԻ XXV 1907.

ԼՈՅՍ ՏԵՍՈՒԱԾ

Բոլոր մանուկներին շնորհաւոր նոր տարի—պատկեր։

Հին և Նոր տարի (ոտանաւոր) Կ. Կ. Մելիք-Շահնազարեանց։

Հարիսններ (պատկերազարդ) Հէքիաթ) Լ. Մելիք-Ադամեանց։

Հուրի-Մալաք (հէքիաթ ոտանաւոր) Ա. Տ. Ի.

Հաւերն ու աքաղաղները—պատկեր։

Ծաղիկների մէջ (Նոր ծանօթներ) Կ. Կ. Մ. Շահ

Նոր տարւայ երգեր—պատկեր։

Թուխի (պատմած)—Lucy Audretsch.

Պանդուխտի տխուր (բանաստեղծ.)—Տ. Հիւսհանց։

Ծլոտի լեզուն—Ղ. Աղայեան։

Բագու (ոտանաւոր)—Ն. Տ. Ա.

Բագու (Ֆովկը)—պատկեր։

Երջանիկ Չուչուկ (աւանդութիւն)—Սկյրի։

Պահիկ ու Լիտիկ (տատակ)—Յար. Թումանեան

Չ ա ր ճ ա ր ի ք

Հանելուկ, առաջարկ, խնդիր—(Մոնի, Անտիկ.-Մօրէ, Զարուհի)։

Մամուլի Հիւրոյ Թիֆլիսում

ԸՆԴՈՒՆՈՒՄ Է

„ԳԱՅԵՏԱ ՇԵՒՅՈՎԱ“ հնդամեայ լրագրի բաժանորդագրութիւնը ամբողջ կովկասի համար։ Թիֆլիսի բաժանորդներին մեր գրասենեակը են տարեկան։

Իւրաքանչիւր №-ը 10 կ., 20 №-ը—1 ր. 50 կ.

Բացում է 1906 ն. թաժանորդագրութիւն

ԱՐԱՐԱՏ

Ս. Էջմիածնի հայրապետական ամենայն պաշտօնական տեղեկագիր.

Բաժանորդագինը { Տուրսուտ. 4 ր. / Արտաս. 5 ր.

Св. Эчміадзинъ. Типографическій Комитетъ. Etchmiadzine. Rédaction de la Revue «Ararat».

ՄՇԱԿ

Բաղարական եւ Գրական լրագիր:

Բաժանորդագինը՝ տարին 10 ր. կէս տարին—6 ր. ամիսը 1 ր., Եւրոպայի համար տարին 30 Ֆր., Պարսկաստանի 10 ր.

Հասցէն՝ Тифлисъ. Редакція «Мшакъ» Tiflis, Rédaction du journal «Mschak».

Художественныя Сокровища Россіи XII

Ежемѣсячный иллюстрированный сборникъ, издаваемый Императорскимъ Обществомъ Поощренія Художествъ, подъ редакціей Адріана Прахова.

Подп. цѣна въ годъ 12 р. (заграницу 14 р.)

Адресъ: С.-Петербургъ. Редакція Сборника „Художественныя Сокровища Россіи“. Мойка 83.

ԼՈՒՄԱ

Գրական Բաղաքական-Գաստիարակչական Եւ Հաճոյքի ամսագիր.

(Ընդարձակ գրադարձ եւ աշխատակիցների ահռելագոյան կազմով).

Բաժանորդագինը 8 ր. (Արտասահման 27 ֆր.

Հասցէն՝ Тифлисъ. Редакція журнала «Лума» Tiflis (Caucase) Rédaction de la revue Louma

«Tygodnik Illustrowany»

Պատկերազարդ շաբաթաթերթ Տարեկան գինը 8 ր., կէս տարին 4 ր. Երեք ամիսը 2 ր., մի ամիսը 1 ր.

Հասցէն՝ «Tygodnik Illustrowany» Warszawa, ulica Zgoda, 12.

ՀԱՅԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ

Բաղաքական, Ազատախոհ Գրականութենական.

Տարեկան գինը 15 ֆր.—6 ր.

Հասցէն՝ Rédaction de la Revue «Handess» Vienne (Autriche) VII/2 Mechitharistendasse, 4.

„ՀՈՍԱՆՆԱ“

Հասարակական, Տնտեսական, Բաղաքական եւ Գրական Օրաթերթ.

Բաժանորդագինն՝ է Թիֆլիսում և գաւառներում տարեկան 6 րուբլի, կէս-տարեանը 3 րուբլի ամսական 50 կոպէկ:

Արտասահմանում և պարսկաստանում 20 ֆրանկ. կէս տարին 10 ֆրանկ, ամսեկան 2 ֆր:

Հասցէն՝ Тифлисъ, Редакція „Осанкъ“, Николаевская, № 9 կամ Tiflis. Caucase, Rédaction «Hossank».

ԺԱՄԱՆԱԿ

Հասարակական, տնտեսական, բաղաքական եւ գրական օրաթերթ.

Բաժնեգինն է՝ տարին 7 ր. (Արտասահման 32 ֆր.) Պարսկաստան 9 ր.

Դիմել՝ Тифлисъ. Редакція «Жаманакъ» (Tiflis, Russie. Rédaction «Jamanak».

Всемірный Юморъ

Литературно-Худож. Еженедѣл. Изданіе.

Цѣлая серія изданій остроумнѣйшихъ произведеній какъ классиковъ, такъ и новѣйшихъ иностранныхъ писателей съ иллюстраціями къ тексту, наррикатурами русскихъ и иностранныхъ художниковъ.

Печатаются съ перваго номера остроумнѣйшія изъ новеллъ Бокаччіо, избран. сказки Шахеразады, изящ. и пикант. разсказы Гюи де Мопасана, Марселя Прев, Марксъ Твена.

Роскошное приложеніе

500 изящ. репродукцій съ картинъ лучшихъ иностран. худож. въ жанрѣ Le Nu шедевры женской красоты.

Безплатная премія

Иллюст. Альбомъ рус. юморист. XIX вѣка.

Подписная цѣна въ годъ 4 руб., въ 1 мѣсяцъ 50 к.

Пробный № высылается за двѣ семикопѣечныя почт. марки.

Адресъ: С.-Петербургъ. Главная Контора Т-ва „Народная Польза“ Коломенская, 39.

Moderne Kunst illustrierte Zeitschrift

Verlang von Rich. Bong

Berlin. Leipzig. Wien-Stuttgart.

Բաժանորդագինը տարին 16 m. 80. Կարելի է գրել և Թաւուշի Բիւրօ միջոցով:

С.-Петербургскія Вѣдомости.

подъ редакціей Кн. Э. Э. Ухтомскаго.

Год. пл. 12 руб. на 6 м.—7 р. на 1 м.—1 р.—50 к.

Адресъ: Редакція „С.-Петербургскихъ Вѣдомостей.

С.-Петербургъ

„ЗАКАВКАЗЬЕ“.

БОЛЬШАЯ ОБЩЕСТВЕННО-ПОЛИТИЧЕСК. И ЛИТЕРАТУРНАЯ ГАЗЕТА

ПОДПИСНАЯ ЦѢНА: на годъ—8 р., на 6 мѣс.—5 р., пожѣсячно 1 р.

Допускается разсрочка для годовыхъ подписчиковъ: при подпискѣ—3 рубля, къ 1-му апрѣля—3 руб. и къ 1-му іюля—2 руб. За границу—двое.

Плата за объявленія: впереди текста за строку петита 15 коп., послѣ текста—8 коп.

Тифлисъ, Головинскій пр. д. Пондоева, рядомъ съ городской аптекой.

Редакторъ-издатель М. А. РАТУЗА

„РОДНИКЪ“

XXVI *г. изд. подъ одной редакціей.* Журналъ для семьи и школы. Одобренъ для всѣхъ учебн. завед. Подписчики въ 1907 г. получатъ: 24 №№ журнала, 12 кн. «Библіотеки Родника» (всего 36 кн.) и 24 отд. картинки.

Цѣна въ годъ 5 рублей съ пересылкой

Новые подписчики на «Родникъ» могутъ получить «Юбилейную книжку Родника» (по случаю 25-лѣтія) за 40 коп. съ пересылкой

„ВОСПИТАНІЕ и ОБУЧЕНІЕ“

XXXI года изданія. Педагогическій журналъ, 12 №№ въ годъ. Вопросы семейнаго воспитанія. Родительскіе кружки. Хроника дѣтской жизни. Библіографія

Цѣна въ годъ одинъ рубль съ пересылкой

„СОЛНЫШКО“

III года изданія Журналъ для дѣтей младшаго возраста 12 книж. со многими рис. приложеніе—40 картинъ съ текстомъ. Допущенъ для низшихъ училищъ, въ безпл. народныя читальни и для библ. младшаго возраста средн. учебн. заведеній.

Цѣна въ годъ одинъ рубль съ пересылкой.

Адресъ: С.-Петербургъ, Захарьевская

Редакторъ-издатель АЛЕКСѢЙ АЛЬМЕДИНГЕНЪ

СЛОВО

ежед. политич. эконом. общест. и литератур. газета.

ВЫХОДИТЪ въ С.-ПЕТЕРБУРГѢ съ 19-го ноября 1906 г.

Главная политич. задача **СЛОВА**—созданіе конституціон. центра

НАША ПРОГРАММА:

Цѣлость и нераздѣльность Россіи.

Развитіе русской государственности на началахъ прогрессивной конституціонной монархіи.

Всеобщее образованіе на началахъ широкаго общественнаго почина и съ устраненіемъ особыхъ правъ и привилегій по образованію.

Свобода слова, печати, союзовъ и собраній при твердой власти, основанной на общественномъ довѣріи.

Борьба съ насиліемъ справа и слѣва. Развитіе широкаго народнаго творчества.

Миролюбіе и сдержанность внѣшней политики при твердой и исполненной достоинства охранѣ національныхъ интересовъ.

Реформа арміи и флота.

Служеніе національнымъ началамъ въ литературѣ и искусствѣ во всѣхъ его областяхъ при полномъ вниманіи ко всякимъ новымъ художественнымъ теченіямъ.

Редакторъ-Издатель М. М. ѲЕДОРОВЪ.

Условія подписки съ доставкой и пересылкой

На 12 мѣс.—12 р., на 6 мѣс.—6 р. 50 к., на 3 мѣс.—3 р. 50 к., на 1 мѣс.—1 р. 25 к.

Для учащейся молодежи, народныхъ учителей и для волостныхъ правленій и сельскихъ обществъ допускается скидка въ 25% съ подписной цѣны.

Подписка принимается въ Главной конторѣ газеты «Слово», въ С.-Петербургѣ, Пантелей 92

ТИПОГРАФІЯ «ГЕРМЕСЪ», Мадатовская, № 5